

Լաիտի Դատարանը Ընդդեմ Ատրպեյճանի Գործով Որոշումը Պիտի Կայացնել Յառաջիկայ Շաբաթներու Ընթացքին

«Ազատութիւնը» կը հաղորդէ որ, Լահէյի Միջազգային Դատարանը, որ լսեց Հայաստանի հայցը ընդդէմ Ատրպեյճանի, չառաջիկայ ամիսներուն, լաւագոյն պարագային շաբաթներու ընթացքին որոշում պիտի կայացնէ: Հայկական կողմը, հարցին հրատապութիւնը հաշուի առնելով, խնդրած է հնարաւորինս արագ արձագանգել իր դիմումին:

Հայաստանը միջազգային դատարանէն կը պահանջէ հրատապ միջոց կիրառել եւ պարտաւորեցնել Ատրպեյճանին՝ բանալ արդէն մէկուկէս ամիսէ փակուած Լաչինի միջանցքը, ապահովել մարդոց, փոխադրութեան ազատ, երկկողմ տեղաշարժը, ինչպէս նաեւ անյապաղ վերականգնել ուժանիւթի մատակարարումը:

Ատրպեյճանը, ի պատասխան, հակադարձեց, որ Հայաստանի մեղադրանքները անհիմն են: Ատրպեյճանի ներկայացուցիչ էլնուր Մամետովի խօսքով՝ Հայաստանը Լաչինի միջանցքին փակ



Լաիտի Միջազգային Դատարանի դատարանները նստերէն մէկուն ընթացքին

ԸԼԼԱԸ կ'օգտագործէ որպէս քաղաքական լծակ:

«Ատրպեյճանը ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի առջեւ վերահաստատած է, որ չէ պարտադրած որեւէ սահմանափակում Լաչինի երկայնքով երթեկեկելուն եւ ոչ ալ կրնար ընել, քանի որ 2020-ի Նոյեմբեր 9-ի եռակողմ համա-

ձայնագրին համաձայն՝ Լաչինի միջանցքը կը գտնուի Ռուսիոյ Դաշնութեան խաղաղապահներու վերահսկողութեան տակ: Բողոքի շարժումին մասնակիցները պարբերաբար կը յայտնեն, որ որեւէ նպատակ չունին եւ չեն ունեցած ճանապարհ փակելու: Իրականութեան մէջ ամէն օր տասնեակ ինքնաշարժներ եւ բեռնատարներ կ'անցնին բողոքի շարժումի վայրին կողքով: Մինչ եւ այստեղ կը խօսիմ, 19 հոգի կարծիր ինչի ուղեկցութեամբ անցած են մի-

Ատամ Շիֆ Յայտարարեց Իր Թեկնածութիւնը՝ Քալիֆորնիոյ Ծերակոյտի Աթոռին



Գոնկրեսական Ատամ Շիֆ

Հայամէտ գոնկրեսական Ատամ Շիֆ պաշտօնապէս յայտարարեց, որ պիտի մասնակցի 2024-ին կայանալիք Քալիֆորնիոյ Ծերակոյտին ընտրութիւններուն: Կը սպասուի որ, ներկայիս այդ աթոռը գրաւող Դեմոկրատ ծերակուտական Տայան Ֆայնսթայն, տարիքի բերումով չմասնակցի վերընտրութեան:

Բացի Ատամ Շիֆէն, նոյն աթոռ համար իր թեկնածութիւնը յայտարարած է նաեւ Քէթի Փորթըր, որ ներկայացուցիչներու Տու-

Ազգային Երեք Կուսակցութիւններու Յայտարարութիւն

Ուրբաթ, Յունուար 27, 2023-ի երեկոյեան, ՌԱԿ-ի Ալթատինայի գրասենեակին մէջ, ՍԴՀԿ-ի, ՀՅԴ-ի եւ ՌԱԿ-ի Արեւմտեան Ամերիկայի ղեկավարութեան ներկայացուցիչները ունեցան աւելի քան երկժամեայ հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուեցան Արցախահայութեան օրըստօրէ սրող տագնապալի իրավիճակը եւ մեր տեղական ազգային կեանքը յուզող հարցերը: Հանդիպումին ՍԴՀԿ-էն կը մասնակցէին Վազգէն Խոտանեան (ատենապետ) եւ Միհրան Խաչատուրեան, ՀՅԴ-էն՝ Տարօն Տէր Խաչատուրեան (ատենապետ) եւ Գարեգին Խանճեան, ՌԱԿ-էն՝ Տոքթ. Ռաֆֆի Պալեան (ատենապետ) եւ Կարօ Քիւփէլեան:

Շեշտը դրուեցաւ մեր ազգային դատը առանց ընկրկումի հետապնդելու, ինչպէս նաեւ մեր պետականութիւնն ու անկախութիւնը առաւելագոյն ուժերու լարումով եւ նպատակասլաց աշխատանքով շարունակելուն վրայ: Ցեղասպան թուրքիոյ եւ անոր գործընկեր Ազրպեյճանի հայաջինջ քաղաքականութիւնը կը մնայ առկայ նաեւ այսօր: Պարտինք Արցախահայութեան ի նպաստ մեր անմիջական զօրակցութիւնը յայտնել՝ ճգնաժամը բարձրացնելով տեղական, նահանգային եւ դաշնակցային մակարդակներու վրայ եւ պահանջելով ԱՄՆ-էն շտապ միջամտութիւն ցոյց տալ Բերձորի միջանցքին վերաբացման ուղղութեամբ: Հանդիպման ընթացքին որոշուեցաւ նախորդ տարիներուն հաստատուած աւանդութեամբ ու միացեալ ճիգերով նոր թափ տալ գաղութային կառոյցներուն (AGC, UACLA) կազմակերպելու 2023 թուականի ապրիլեան ոգեկոչումները: Կը նախատեսուին նաեւ երեք կուսակցութեանց համատեղ ճիգերով ազգային այլ օրակարգեր տանիլ առաջ:

Հայ ազգն ու հայրենիքը գոյութեան կայքարի մէջ են: Բոլորիս ճիտին պարտքն է միասնական շարքերով ծառայել հայրենիքին ու հայութեան: Արդ, մեր կոչն է բոլորիդ համախմբուիլ մեր ազգային ու միութեան կառոյցներուն շուրջ, զերծ մնալ հատուածական հաշիւներէ, գերադասել ազգայինն ու մեր իրաւունքները, եւ բերել ձեր մասնակցութիւնը ազգի անվտանգութեան եւ բարօրութեան օգտին:

ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ
ՌԱԿ Արեւմտեան Ամերիկայի Երջանային Վարչութիւն
Յունուար 29, 2023

Պեղրի Հիւզի Քաղաքապետը Կը Դատապարտէ Հակահայ Թռուցիկներու Յայտնուիլը Քաղաքին Մէջ

Պեղրի Հիւզի քաղաքապետ Լիլի Պոսս դատապարտեց անցնող շաբաթավերջին քաղաքի մէջ յայտնուած հակահայ թռուցիկները, որոնք փակցուած էին ծառերուն վրայ այն պահուն երբ շրջանի Հայերը ցոյց կը կատարէին Ատրպեյճանի հրկատոսարանին դէմ:

Թռուցիկներուն վրայ գրուած էին Փաքիստան + Ատրպեյճան + Թուրքիա + Իսրայէլ չորս եղբայրներ պիտի ջնջեն Հայաստանը քարտէսէն՝ աստուծոյ կամքով:

Քաղաքապետ Պոսս ընկերային ցանցերու վրայ անմիջապէս դատապարտեց այս երեւոյթը, իսկ ոստիկանութիւնը սկսաւ աչքէ անցնել շրջանին մէջ տեղակայուած նկարահանման սարքերու բովանդակութիւնը՝ պատասխանատուները յայտնաբերելու համար:

«Յաճախ եւ Յաճախ կրկնած եմ որ, ատելութիւնը տեղ չունի Պեղրի Հիւզի մէջ կամ այլուր: Ես միշտ պիտի ոտքի կանգնիմ եւ պիտի դատապարտեմ այդ», գրած էր քաղաքապետը Ֆէյսպուքի իր



էջին վրայ: Երեւոյթը դատապարտեց նաեւ մօտակաջ Ուեսթ Հոլիվուտի քաղաքապետ Սեփի Շէյնը: Երկու քաղաքներն ալ մաս կը կազմեն Լոս Անճելըսի գաւառին, ուր կ'ապրին տասնեակ հազարաւոր հայեր:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կեղծիքների Մի Ամբողջ «Փունջ»

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Միջազգային հանրութեան մտահոգութիւններին ի պատասխան Ատրպէյջանի նկատմամբ գործադրուող աննախադէպ միջազգային ճնշումներին Պաքուն սկսել է արձագանքել հերթական կեղծիքների չափաբաժինների տարածմամբ եւ մանրակրկտութեան դիմելով: Մէկ օրուայ ընթացքում այդ երկրի երկու պետական կառույց՝ ԱԳ նախարարութիւնը եւ ՄԻՊ-ը, միաժամանակ փորձեցին իրականութիւնը նենգափոխելու անյաշող եւ ցածրորակ փորձ ձեռնարկել: Այդ երկրի արտաքին գերատեսչութիւնը յայտարարեց, թէ Լազինի միջանցքում ստեղծուած իրավիճակի հետ կապուած ՄԱԿ-ի Ազգաբնակչութեան հիմնադրամի յայտարարութիւնն իրականութեանը չի համապատասխանում եւ կողմնակալ է, իսկ օմբուդմենն էլ ատրպէյջանական կեղծ բնապահպանական օրակարգն Արցախի նկատմամբ անյաշող շահարկելուց յետոյ արդէն տեղափոխեց Հայաստանի վրայ՝ յայտարարելով, թէ միջազգային հանրութիւնը պէտք է պահանջի դադարեցնել Մեծամորի ԱԷԿ-ի գործունէութիւնը, իբր թէ այն կարող է ունենալ Չեռնոպիլի եւ Ֆուկուշիմայի ատոմակայանների ճակատագիրը:

Վերջին տասնամեակներում նախկին եւ կազմի գերադիւնահանման հետեւանքով աշխարհի ամենամեծ լիճը՝ Կասպից ծովը, էկոլոգիական աղէտի եզրին հասցրած պետութեան իշխանութիւնների ներկայացուցիչը փորձում է խօսել Հայաստանի ատոմակայանի էկոլոգիական խնդիրներից, այն դէպքում, երբ «Ռոսատոմի» օգնութեամբ նրա արդիականացումն աւարտուել է բոլորովին վերջերս՝ 2021 թ. իսկ 2022-ի Հոկտեմբերին Ատոմային: Էներգիայի միջազգային գործակալութեան (ՄԱԳԱՏԷ) գլխավոր տնօրէն Ռաֆայէլ Գրոսսսին Հայաստան կատարած այցի ժամանակ յայտարարել էր, որ դրանից յետոյ Հայկական ԱԷԿ-ի անվտանգութեան ապահովման ոլորտում իրավիճակը բարելաւուած է:

Պաշտօնական Պաքուն լաւ գիտի, որ երրորդական երկրները զգայուն են ատոմակայանների խնդրի հանդէպ եւ Արցախի ժողովրդի նկատմամբ ձեռնարկած իր հակահամախառնական քայլերը փորձում է շղարշել կեղծ օրակարգով: Միանշանակ է, որ Հայաստանը չի փակի ԱԷԿ-ը, քանի դեռ չի գտել էներգիայի այլընտրանքային եւ էժան փոխարինող: ՄԱԿ-ի Ազգաբնակչութեան հիմնադրամի՝ Արցախի ժողովրդին հումանիտար աղէտի առաջ կանգնեցնելու Ատրպէյջանի քայլերը դատապարտող յայտարարութեանն արձագանքելիս այդ երկրի իշխանութիւնները գերազանցել են կեղծիքի եւ մանրակրկտութեան բոլոր չափաբաժինները:

Վերջիններս կրկին անյաշող փորձ են անում միջազգային հանրութեանը մոլորութեան մէջ զգել՝ պնդելով, թէ բնապահպաններն են փակել ճանապարհը եւ նրանց պա-

հանջը վերաբերում է շրջակայ միջավայրին, այն դէպքում, երբ միջազգային կառույցները եւ հիմնահարցի կարգաւորմամբ շահագրգռուած պետութիւնները գերթափանցիկ ձեւով Պաքուն ակնարկել են, որ չեն հաւատում այդ կեղծիքին, որ Լազինի միջանցքում ակցիան քաղաքական է, ինչի հետեւանքով 120 հազար արցախցիներ յայտնուել են շրջափակման մէջ եւ խախտուել են նրանց բոլոր հիմնարար իրաւունքները:

Մեծացնելով մանրակրկտացի չափաբաժինը՝ Ատրպէյջանի ԱԳՆ-ն անհիմն է համարել ՄԱԿ-ի հիմնադրամի պնդումները, թէ Արցախը շրջափակելու հետեւանքով այնտեղ հումանիտար աղէտ են ստեղծել:

Պաքուն փորձում է աշխարհին համոզել, որ միջանցքով կարմիր խաչի եւ ռուսական խաղաղամարտի գորակազմի աւտոմեքենաներով սնունդ եւ դեղորայք են տեղափոխել: Բայց միջազգային կառույցները՝ մասնաւորապէս ՄԱԿ-ը, որի հովանու ներքոյ է նաեւ գործում կարմիր խաչը, քաջատեղեակ են, որ Արցախից ծանր հիւանդներ տեղափոխող իրենց անձնակազմերը եւ սեփական պարենային կարիքները ապահովող ռուս խաղաղապահների աւտոշարասիւնները չեն կարող որեւէ ազդեցութիւն ունենալ այն իրավիճակի վրայ, որում յայտնուել է Արցախի ժողովուրդը, այդ թւում՝ 30 հազար երեխաները:

Միւս կողմից էլ միջազգային հանրութիւնը, գերագոյն ցանկութեան դէպքում էլ, չի կարող ընդունել, որ ատրպէյջանցի «բնապահպաններն» են պարբերաբար փակում Հայաստանից Արցախ մտնող գազատարը եւ կտրում բարձր լարման հոսանքի լարերը՝ ձմրան կէսին ցրտի ու սովի մատնելով արցախցիներին: Ատրպէյջանի նման անգրագէտ քարոզչութիւնը նաեւ մէկ այլ նպատակ է հետապնդում: Պաքուն փորձում է ցոյց տալ, թէ, իբր, ինքն իր տարածքում է գործում, իսկ արցախցիներին ներկայացնում է որպէս Ատրպէյջանի հայազգի քաղաքացիներ: Բայց համաշխարհային հանրութիւնը միամիտ չէ եւ իրեն հարց է տալիս, թէ այդ դէպքում ինչո՞ւ են Ատրպէյջանի եւ Արցախի շփման գծում կանգնած ռուս խաղաղապահները, ինչո՞ւ է Արցախի պաշտպանութեան բանակը կանգնած շփման գծի երկայնքով եւ վերջապէս, աշխարհը լսում է Արցախի ժողովրդի եւ իշխանութիւնների յայտարարութիւնը, թէ իրենց երկիրը երբեք չի լինի Ատրպէյջանի կազմում: Լազինի միջանցքի փակման փաստով միջազգային հանրութիւնը վերջնականապէս համոզուեց, որ չեն փոխուել Ատրպէյջանի վերջին 35 տարուայ նպատակները՝ Արցախում էթնիկ զտումներ իրականացնելը եւ իր բնօրրանից մի ողջ ժողովրդի դուրս մղելը: Ժամանակն է, որ պաշտօնական Պաքուն այս իրականութեան հետ առերեսուել եւ վերադառնալ կառուցողական բանակցային դաշտ, ինչը բխում է բոլոր կողմերի շահերից:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

«3+3»-Ն ՈՒ Հայաստանի եւ Արցախի Անվտանգութեան Բարդ Մաթեմատիկան

ՅԱՎՈՐ ԲԱՐԱՆԵԱՆ

Ռուսաստանի արտգործնախարարութիւնը յայտարարել է, որ Մոսկուան մտադիր է խթանել 2021 թուականի Դեկտեմբերից ձեւաւորուած «3+3» խորհրդատուական հարթակի աշխատանքը: Այս գաղափարը, որ բաւականին աշխուժօրէն շրջանառուեց այդ ժամանակահատուածում եւ տեղի ունեցաւ առաջին հանդիպումը Մոսկուայում՝ հինգ երկրների փոխարտգործնախարարների եւ վեց երկրի դրօշների պայմաններում (Վրաստանը չմասնակցեց, սակայն առկայ էր Վրաստանի դրօշը), յետագայում զգալիօրէն սառեց եւ գործնականում տեղի չի ունեցել երկրորդ հանդիպում, մինչդեռ անցել է աւելի քան մէկ տարի: Հետեւաբար հարց է առաջանում, թէ ինչո՞ւ: Պատճառը թերեւս ուժքանակային պատերազմն է: Այդ պատերազմը զգալիօրէն փոխեց նաեւ կովկասեան իրողութիւններն ու ռեգիոնալ խաղացողների մոտիվները: Միեւնոյն ժամանակ սակայն, պատերազմի մէկ տարին թերեւս նկատելիօրէն մոտիվացրել է ռեգիոնալ խաղացողներին, գոնէ խոշոր եռեակին՝ Իրան, Ռուսաստան, Թուրքիա: Խօսքը այն մոտիվացիայի մասին է, որ կովկասը չդառնալ պատերազմական նոր թատերաբեմ եւ համաշխարհային պատերազմն այստեղ արտայայտուելի առաւելապէս քաղաքական-դիւանագիտական պայքարի տեսքով: Թէկող կոշտ պայքարի, բայց առանց պատերազմական «տրանսֆորմացիայի»:

Յամենայն դէպս, ողջախոհութիւնը յուշում է, որ կովկասեան մեծ պատերազմ եւ ապակայունացում ձեռնարկ էլ այդ եռեակից որեւէ մէկին: Պատճառները ինչ որ մասով նոյնական են, որոշակիօրէն զգալի տարբեր, սակայն մեծ իմաստով պատերազմ չի ուզում ոչ ոք: Հնարաւոր է, որ «3+3» ձեւաչափի «ապաստանեցումը» դիտարկուել է հնարաւոր ապակայունացման ռիսկերը առաւել կառավարելի դարձնելու միջոցների համատեքստում: Հայաստանի համար սա ունի երկակի իմաստ կամ նշանակութիւն:

Մի կողմից, եթէ ձեւաչափը նպաստում է կովկասում իրավիճակի կառավարելիութեանն ու բարձրացնում կայունութեան աստիճանը, ապա դա օգտակար է: Միւս կողմից, 3+3 ձեւաչափը մի շրջանակ է, որտեղ կայունութեան հարցերը կարող են լուծուել նաեւ Հայաստանի շահերի հաշուին, եթէ ոչ Սիւնիքում՝ քանի որ Իրանն այստեղ կարող է լինել արգելակ, ապա այլ ուղղութիւններով, հաշուի առնելով նաեւ այն աւելի մեծ կարեւորութիւնը, որ Թուրքիան ու Ատրպէյջանը ներկայումս ունեն Ուքրանիայում պատերազմող եւ արեւմտեան պատժամիջոցների տակ յայտնուած Ռուսաստանի համար: Երկակի այդ իրավիճակում Հայաստանի համար թերեւս առանցքային խնդիրը ոչ թէ «3+3»-ին ընդդիմանալը կամ արգելակելն է, այդ առումով էլ աւելի սրելով իր հաշուին լուծումներ գտնելու մղումները խոշոր դերակատարների շրջանում, ինչին բնականաբար ոչ միայն Ատրպէյջանը դէմ չի լինի, այլ նաեւ Վրաստանը, այլ «3+3»-ի շուրջ աշխատանքին զուգահեռ այլ մեխանիզմներն աշխոյժ պահե-

լը, եւ ոչ միայն երրորդական կամ երրորդականութեան թեւում եղած մեխանիզմներն ու հնարաւորութիւնները, այլ նաեւ ուրիշ ուղղութիւններին, ինչի օրինակներից մէկը կարող է լինել Եգիպտոսի հետ բարձր մակարդակի երկխօսութիւնը, որ տեղի ունեցաւ Հայաստանում Յունուարի 28-29-ին՝ այդ երկրի նախագահի այցի շրջանակում, որը նաեւ ռեգիոնալ էր: Ընդ որում, սա իհարկէ մի օրինակ է, քանի որ գործնական առումով Երեւանի համար խնդիր է աւելացնել այդ օրինակները, որոնց թւում կարող է լինել նաեւ Քաթարի պետութիւնը: Ընդ որում, խնդիրն այստեղ ամենեւին չի կարող դրուել ռեգիոնալ խոշոր խաղացողներին հակադրուող ռեսուրսի ձեւաւորման տրամաբանութեան մէջ: Դա կը լինի ոչ միայն ինքնախաբէութիւն, այլ վտանգաւոր մոլորութիւն, մի քանի պատճառով: Առաւելապէս այն, որ այդ «զուգահեռ» խաղացողների համար ռեգիոնալ միւս դերակատարները մեղմ ասած պակաս կարեւոր չեն, քան Հայաստանը: Երեւանի համար պարզապէս պէտք է առանցքային լինի այնպիսի բազմաշերտ միջավայրի նպաստելը, որը միտուած կը լինի տարբեր շառաւիղով ռեգիոնալ քննարկումների միջավայրում ապահովել հայկական շահերի առաւելագոյն պաշտպանութիւն՝ այդ թւում որեւէ պայմանաւորութեան մանրադրամի վերածուելու ռիսկերից:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՂԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ԼՈՒՐԵՐ

Փտածութեան Ընկալման Համաթիւին Մէջ Հայաստան Նահանջ Արձանագրած Է

«Թրանսփերենսի Ինթերնեշնըլ» միջազգային ոչ-կառավարական կազմակերպութիւնը հրապարակած է փտածութեան ընկալման 2022 թուականի համաթիւը: Հայաստանը ոչ միայն չէ յաղթահարած լճացումը, այլև թուլացած է դիրքերը՝ կորսնցնելով 3 միաւոր, եւ այժմ 46 միաւորով յայտնուած է 63-րդ տեղը՝ նախորդ տարուան 58-րդ փոխարէն:



տանի մէջ քանի մը տարուան յառաջընթացէն յետոյ մտահոգիչ նշաններ կը նկատուին՝ երկիրը անցեալ տարի կորսնցուցած է 3 միաւոր: Թէեւ այդ անկումը «վիճակագրորէն նշանակալի չէ», այդ դուճանդերձ, միտումը, ըստ կառուցին, կ'արտացոլէ «զսպող եւ հահակչող մեխանիզմներու, իրաւապահ գործունէութեան մէջ թափանցիկութեան, անկախ դատական համակարգին մէջ եւ քաղաքացական տարածքի պաշտպանութեան ապահովման խախտումը»:


Յուցակը կ'օգտագործէ 100-նիշնոց սանդղակ, ուր 100 միաւոր կը գնահատուի փտածութեան ամբողջութեամբ գերծ միջավայրը, իսկ 0-ն փտածութեան ամենաբարձր ցուցանիշն է: Անցեալ տարուան ուսումնասիրութեան՝ 180 երկիրներու եւ տարածքներու համար արձանագրուած միջին միաւորը 43 է:

«Թրանսփերենսի Ինթերնեշնըլ»-ի հրապարակուած տարեկան զեկոյցը կը փաստէ, որ աշխարհի երկիրներուն մեծամասնութիւնը չեն կրցած յաջողութեան հասնիլ փտածութեան դէմ պայքարին մէջ. 2017 թուականէն ի վեր 180 երկիրներու 95 տոկոսը գրեթէ չէ ապահոված որեւէ դրական տեղաշարժ: Հայաստանը վերջին 6 տարուան ընթացքին իր դիրքերը բարելաւած 8 երկիրներէն մէկն է, կը նշէ կառուցը:

Այդուհանդերձ, ինչպէս նկատած են հեղինակաւոր կազմակերպութեան փորձագէտները, Հայաստանի

Ուսումնասիրութեան արդիւնքներով, նախորդ տարուան պէս՝ Հայաստանը, բացի Վրաստանէն, առաջ է իր միւս երեք հարեւաններէն՝ Թուրքիայէն, Ատրպէյճանէն եւ Իրանէն:

Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Նախորդ Տարի Աճած Է 14.2 %



Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2022 թուականի 12 ամիսներուն ընթացքին 2021 թուականի համեմատ աւելցած է 14.2 տոկոսով: Այս մասին կը փաստեն ՀՀ Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքին ծաւալը նախորդ տարի 2021-ին համեմատ աւելցած է 7.8 տոկոսով: Գիւղատնտեսութեան համախառն արտադրանքին ծաւալը նախորդ տարուան 12 ամիսներու ընթացքին աճած է 0.4 տոկոսով:

Շինարարութեան ծաւալներուն մէջ նախորդ տարի արձանագրուած է 12.5 տոկոս աճ, առեւտուրի շրջանառութեան մէջ 2022-ի Յունուար-Դեկտեմբերին 2021-ի նկատմամբ յաւելումը կազմած է 17 տոկոս:

2022 թուականին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը 2021-ի նկատմամբ աւելցած է 28.2 տոկոսով:

Ինչ կը վերաբերի սպառողական գիններուն, ապա 2022-ին սպառողական գիններու ցուցակը աճած է

8.6 տոկոսով: Իսկ արդիւնաբերական արտադրանքի գիններուն ցուցակը աճած է 2.6 տոկոսով: Ելեկտրակայանութեան արտադրութեան ծաւալը նախորդ տարուան 12 ամիսներուն 2021-ի նոյն ժամանակին համեմատ աւելցած է 16.1 տոկոսով:

Հայաստանի մէջ միջին ամսական անուանական աշխատավարձը 2022 թուականի Յունուար-Դեկտեմբերին աւելցած է 15.5 տոկոսով՝ կազմելով 235 հազար 576 դրամ: Ընդ որում, պետական հատուածին մէջ յաւելումը եղած է 4.3 տոկոս՝ 186 հազար 940 դրամ, ոչ-պետականին մէջ յաւելումը եղած է 19 տոկոս՝ կազմելով 256 հազար 733 դրամ:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ 2022-ին 2021-ի համեմատ արձանագրուած է 68.6 տոկոս աճ, ընդ որում արտահանումը աճած է 77.7 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 63.5 տոկոսով:

Դրամին փոխարժէքը ԱՄՆ տոլարին նկատմամբ 2022-ի Յունուար-Դեկտեմբերին կազմած է 435.67:

Սպան Օտարերկրեայ Յատուկ Ծառայութեան Փոխանցած Է Հնդկաստանէն Ձեռք Բերուած Ձինատեսակներու Վերաբերեալ Տեղեկութիւններ

«ՀՀ քաղաքացի, Պաշտպանութեան Նախարարութեան N գործառնաբան կոչումով սպան 2021 թուականի սկզբից յայտնուել է օտարերկրեայ յատուկ ծառայութիւնների ուշադրութեան կեդրոնում եւ հաւաքագրուել նրանց կողմից:



Այնուհետեւ, ծառայութեան նշանակուելով ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մէկ այլ գործառնաբան՝ որպէս գործառնաբան ծառայութիւններից մէկի պետ, ծառայութեան ընթացքում օտարերկրեայ յատուկ ծառայութիւններից հաղորդագրութիւնների միջոցով ստանալով համազորակցութիւնը շարունակելու վերաբերեալ առաջարկութիւն եւ ընդունելով այն, պարտաւորուել է վարձատրութեան դիմաց հաւաքել եւ օտարերկրեայ յատուկ ծառայութիւններին յանձնել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեանը, տարածքային անձեռնմխելիութեանը եւ արտաքին անվտանգութեանն ի վնաս օգտագործելու համար ռազմական բնագաւառի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկութիւններ, որպիսի պայմաններում իր յանցաւոր գործունէութիւնն իրագործելով՝ 2021 թուականի Ապրիլ-Մայիս ամիսների ընթացքում հաւաքել եւ իր կողմից օգտագործող տարբեր բջջային յաւելումների միջոցով օտարերկրեայ յատուկ ծառայութեան ներկայացուցչին է յանձնել պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող ռազմական բնագաւառի տեղեկութիւններ, մասնաւորապէս՝ իրենց ստորաբաժանման պահպանութեան ներքոյ գտնուող սպառազինութեան, զինատեսակների, քանակի, մարտական դիրքի տեղակայման վայրի վերաբերեալ տեղեկութիւններ:

ներ եւ այլ տուեալներ՝ լուսանկարներով ցուցադրել է սպառազինութիւնը եւ զինատեսակների քանակը, այդ թւում՝ Հնդկաստանից ձեռք բերուած ռազմական տեխնիկայի վերաբերեալ, որոնց դիմաց որպէս վարձատրութիւն՝ օտարերկրեայ յատուկ ծառայութեան ներկայացուցչից 2 անգամ տարբեր օրերի ընթացքում ստացել է գումար եւ բջջային հեռախօս՝ այդ կերպ կատարելով պետական դաւաճանութիւն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետութեան տարածքային անձեռնմխելիութեան եւ արտաքին անվտանգութեան», նշուած է ԱԱԾ-ի տարածած հաղորդագրութեան մէջ:

ՀՀ ԱԱԾ Քննչական Բաժանմունքին մէջ նախաձեռնուած քրէական վարույթի շրջանակներուն մէջ իրականացուած են խուզարկութիւններ, չիշեալ սպային ներկայացուած է մեղադրանք, դատարանին որոշմամբ անոր նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանաւորումը:

Մնացական Մարտիրոսեանի Նշանակումը Անընդունելի Է ՀԿ-ներ

Շարք մը հասարակական կազմակերպութիւններ համատեղ յայտարարութիւն տարածած են՝ Մնացական Մարտիրոսեանը Երեւանի առաջին ատեանի ընդհանուր իրաւասութեան քրէական դատարանի նախագահ նշանակելու առնչութեամբ:



Դատաւոր Մնացական Մարտիրոսեան

Բարձրագոյն Դատական Խորհուրդը՝ դռնփակ նիստում, քննարկելով Երեւան քաղաքի առաջին ատեանի ընդհանուր իրաւասութեան քրէական դատարանի նախագահի պաշտօնի թափուր տեղում թեկնածութիւն առաջարկելու վերաբերեալ հարցը, որոշել է Հանրապետութեան նախագահին առաջարկել Մնացական Վոլոտեայի Մարտիրոսեանի թեկնածութիւնը:

Բարձրագոյն Դատական Խորհուրդի վերոնշեալ որոշումը անընդունելի եւ Մնացական Մարտիրոսեանի թեկնածութիւնը Հանրապետութեան նախագահին ներկայացնելը դատապարտելի է մի

շարք պատճառներով», նշուած է յայտարարութեան մէջ: Նաեւ կը նշուի, որ Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի շարք մը վճիռներով հաստատուած են հիմնարար իրաւունքներու խախտումներ եւ քաղաքական հետապնդման փաստը:

ԼՈՒՐԵՐ

«Բանակը Սեզ Անհրաժեշտ է Ոչ Թե Պատերազմի, Այլ Խաղաղութան Համար».
Փաշինեան



Հայաստանի ղեկավարութիւնը եռաբլուր այցելութեան ընթացքին

Հայկական բանակի կազմա-
ւորման 31-րդ տարեդարձի առի-
թով Հայաստանի ղեկավարութիւնը
այցելեց Եռաբլուր: Այս առթիւ
յղած իր ուղերձի ընթացքին վար-
չապետ Նիկոլ Փաշինեանը ներող-
ողութիւն խնդրեց Յունուար 19-ի
հրդեհին գոհ գացած գինձառա-
յողներու ծնողներէն եւ հարազատ-
ներէն:

«Ներողութիւն եմ խնդրում
նաեւ բոլոր այն ծնողներին, որոնց
զաւակները բանակում գոհ են գնա-
ցել ոչ-կանոնադրական յարաբե-
րութիւնների, պետութեան կամ
կառավարութեան թոյլ տուած բաց-
թողումների ու սխալների հետե-
ւանքով ծագած անթոյլատրելի յա-
րաբերութիւնների ու իրավիճակ-
ների», - ըսաւ վարչապետը:

Փաշինեանը նաեւ ընդգծեց. □
«կառավարութիւնը լայնածաւալ
բարեփոխումներ է ձեռնարկել բա-
նակում, որոնց նպատակը իւրա-
քանչիւր գինուորի, իւրաքանչիւր
սպայի աւելի կարող ու պրոֆէսի-
ոնալ, միեւնոյն ժամանակ, աւելի
բարեկեցիկ դարձնելն է»:


Վարչապետը նշեց, որ միջոց-
նէր կը ձեռնարկուին բանակը ժա-

մանակակից սպառազինութեամբ եւ
տեխնիկայով համալրելու ուղղու-
թեամբ՝ փորձելով քաջալերել նա-
եւ տեղական արտադրողներուն:

Փաշինեան նաեւ այցելեց
Պաշտպանութեան նախարարու-
թիւն, ուր ունեցած ելոյթի ըն-
թացքին ան ըսաւ, եւ «երբ որ երբ
մարդը, քաղաքացին հարկ է վճա-
րում, նա իր աջ գրպանից գումարը
տեղափոխում է ձախ գրպան, կամ
հակառակը, որովհետեւ վճարուած
հարկերի հաշուին է ապահովուում
երկրի անվտանգութիւնը, կառուց-
ւում ճանապարհներ, դպրոցներ եւ
այլն»:

«Բանակը մեզ անհրաժեշտ է
ոչ թէ պատերազմի, այլ խաղաղու-
թեան համար, որովհետեւ Զինուած
Ուժերի բարեփոխումներն առա-
ջին հերթին մեզ համար կարեւոր
են կառավարութեան որդեգրած
խաղաղութեան օրակարգն առաջ
մղելու համար»: «Մենք չպէտք է
շեղուենք այդ օրակարգից եւ պէտք
է հետեւողականօրէն առաջ մղենք
խաղաղութեան օրակարգը», □ ըսաւ
Փաշինեան Պաշտպանութեան Նա-
խարարութեան մէջ իր ունեցած
ելոյթի ընթացքին:

Կայացած է Փաշինեան-Փութինի
Հեռախօսազրոյց



Հայաստանի Հանրապետու-
թեան վարչապետ Նիկոլ Փաշինեան
հեռախօսազրոյց ունեցած է Ռուսիոյ
նախագահ Վլադիմիր Փութինի հետ:

Վարչապետ Փաշինեան անդ-
րադարձած է Ատրպէյճանի կողմէ
Լաչինի միջանցքի ապօրինի շրջա-
փակման հետեւանքով Լեռնային Ղա-
րաբաղի մէջ ստեղծուած մարդասի-
րական ճգնաժամին եւ կարեւորած
է անոր յաղթահարման ուղղութեամբ
Ռուսիոյ կողմէ անհրաժեշտ քայլե-
րու իրականացումը:


Այս ծիրին մէջ, անդրադարձ
կատարուած է Լեռնային Ղարաբաղի

մէջ ռուս խաղաղապահ առաքելու-
թեան գործունէութեան:

Զրուցակիցները քննարկած են
2020 թուականի Նոյեմբեր 9-ին,
2021 թուականի Յունուար 11-ին,
Նոյեմբեր 26-ին եւ 2022 թուականի
Հոկտեմբեր 31-ին ստորագրուած
Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպէյ-
ճանի առաջնորդներուն եռակողմ
պայմանաւորութիւններու իրա-
կանացման վերաբերող հարցեր:

Միտքեր փոխանակուած են նա-
եւ հայ-ռուսական համագործակցու-
թեան օրակարգային այլ հարցերու
շուրջ:

Հայաստանի Վարչապետն Ու Եգիպտոսի
Նախագահը Քննարկած Են
Տարածաշրջանային Օրակարգի Հարցեր



Հայաստանի վարչապետի եւ Եգիպտոսի նախագահի հանդիպումը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինե-
ան կառավարութեան մէջ հիւ-
րընկալած է պաշտօնական այցով
Հայաստան ժամանած Եգիպտոսի
նախագահ Ապտըլ Ֆաթիմաս Սի-
սին: Նախ տեղի ունեցած է Հա-
յաստանի եւ Եգիպտոսի առաջ-
նորդներուն առանձնազրոյցը, այ-
նուհետեւ բանակցութիւնները շա-
րունակուած են ընդլայնուած կազ-
մերով:

Ընդլայնուած կազմերով հան-
դիպման ընթացքին վարչապետ
Փաշինեան նշած է, որ կարեւոր
զրոյց ունեցած են Եգիպտոսի նա-
խագահին հետ ու քննարկած են
երկկողմ ու տարածաշրջանային
օրակարգի շատ հարցեր: Նիկոլ
Փաշինեան ներկայացուցած է Ատր-
պէյճանի կողմէ Լաչինի միջանցքի
շրջափակման հետեւանքով Արցա-
խի մէջ ստեղծուած մարդասիրա-
կան ճգնաժամի յաղթահարման ուղ-
ղութեամբ իրականացուող քայլե-
րը: Վարչապետը նաեւ ընդգծած է
Ատրպէյճանի կողմէ 2020 թուակա-

նի Նոյեմբեր 9-ի յայտարարու-
թեան հերթական խախտման փաս-
տը եւ շեշտած է անոր միջազգային
հանրութեան ուշադրութեան ու
համարժէք արձագանգի կարեւո-
րութիւնը:

«Եգիպտոսը մեզ համար վստա-
հելի գործընկեր է նաեւ իսլամա-
կան աշխարհի հետ մեր յարաբե-
րութիւններում եւ խօսակցութեան
մէջ: Մեր այս յարաբերութիւննե-
րը, մեր այս ջերմութիւնն է ցոյց
է դնում նաեւ իսլամական աշխար-
հի եւ քաղաքակրթութեան նկատ-
մամբ մեր վերաբերմունքը, մեր
յարգանքը», նշած է Նիկոլ Փաշինե-
ան:

Հայկական կողմը վերահաս-
տատած է ԵԱՏՄ-ի եւ Եգիպտոսի
միջեւ ազատ առեւտուրի համա-
ձայնագրի շուրջ ընթացող բանակ-
ցութիւններուն մէջ Եգիպտոսին
Հայաստանի աջակցութիւնը, ինչ
որ լայն հնարաւորութիւններ պի-
տի ընձեռէ երկկողմ առեւտրաշր-
ջանառութիւնը խթանելու համար:

Ռուսիոյ ԱԳՆ. «Հայաստանը Դիտորդներու
Հարցով ՀԱՊԿ-ի Փոխարէն
Նախապատուութիւնը Կու տայ ԵՄ-ին»

Ռուսիոյ Դաշնութեան Արտա-
քին Գործերու Նախարարութեան
նշած են, թէ «Ռուսիան կը հաստա-
տէ, որ տարածաշրջանի ՀԱՊԿ դի-
տորդներ գործողելու հնարաւո-
րութիւնը տրամաբանական աւար-
տին չհասցնելով՝ Հայաստանը որո-
շած է նախապատուութիւնը տալ
Եւրոմիութեան»:

Ըստ Ռուսիոյ արտաքին գե-
րատեսչութեան, «եթէ հայ դաշնա-
կիցներուն մօտ պահպանուած է
հետաքրքրութիւնը ՀԱՊԿ-ի դի-
տորդական կարողութիւնները օգ-
տագործելու վերաբերեալ, ապա
առաքելութիւնը կրնայ արագօրէն
տեղակայուիլ»:

Ռուսիոյ Արտաքին Գործերու
Նախարարութեան համոզմամբ, Եւ-
րոմիութեան քաղաքականութիւնը
վնաս պիտի հասցնէ հայերուն եւ
ատրպէյճանցիներուն:

«Ամէն գնով Հայաստանի մէջ
տեղը ամրապնդելու, Ռուսիոյ միջ-
նորդական ջանքերը մէջ կողմ մղե-
լու Եւրոմիութեան փորձերը կրնան
վնաս հասցնել տարածաշրջանի խա-
ղաղ գարգացման ձգտող հայերու եւ
ատրպէյճանցիների հիմնարար շա-
հերուն»:

Ռուսիոյ Դաշնութեան Ար-
տաքին Գործերու Նախարարու-



թիւնը նաեւ նշած է, թէ «Ռուսիոյ
խաղաղապահ գորախումբը պիտի
արձագանգէ Հայաստանի մէջ Եւ-
րոպական Միութեան դիտորդնե-
րու պահուած քին՝ հաշուի առնե-
լով այնտեղ իրավիճակի զարգա-
ցումը»:

Նախարարութիւնը կը պնդէ,
որ «եթէ Պրիւքսէլի մէջ շա-
հագրութեամբ ըլլային Հարաւային
Կովկասի խաղաղութեամբ, ապա
դիտորդներուն աշխատանքը կը
համաձայնեցնէին նաեւ Ատրպէյ-
ճանի հետ»:

Որո՞ւն Կը Պատկանին Սուրբն Պապիկեանին Եւ Արարատ Միրզոյեանին Վերագրուող Առանձնատուները. Civilnet.Am



Լրատուամիջոցներուն եւ ընկերային ցանցերուն վրայ Յունուար 24-ին տարածուեցան առանձնատուներու նկարներ, որոնք, ըստ պնդումներու, կը պատկանին պաշտպանութեան նախարար Սուրբն Պապիկեանին եւ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանին:

Ըստ օգտատէրերուն՝ նկարին մէջ ձախ կողմը պատկերուած առանձնատունը կը պատկանի Սուրբն Պապիկեանին, իսկ աջ հատուածի տունը՝ Արարատ Միրզոյեանին:

Հրապարկման տարածումէն յետոյ Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի խօսնակ Արամ Թորոսեանը հերքած էր Սուրբն Պապիկեանի կապը այդ առանձնատուներէն որեւէ մէկուն հետ:

Միվիլինեթի փաստերու ստուգման խումբը՝ CivilNetCheck-ը, որոշեց Կադաստրի կոմիտէին ձեռք բերել այս առանձնատուներուն կադաստրային գործերը՝ ստուգելու անոնց պատկանելութիւնը:

Նախ տեղորոշեցինք երկու առանձնատուները: Սուրբն Պապիկեանին վերագրուող առանձնատունը եւ կից հողամասը Երեւանի Աջափնեակ թաղամասի Նազարբեկեան թաղամաս 57/17 եւ 57/9 հասցէներով են:

Ինչպէս կը տեղեկանանք կադաստրային փաստաթուղթերէն,

այս առանձնատան նախագծման աշխատանքները սկսած են 2016-էն: Առանձնատան սեփականատէրը, ըստ փաստաթուղթերուն, ծնունդով Լիբանանէն Գանատայի քաղաքացի Վաչէ Պետրոսի Մինասեանն է:

Ան այս հասցէներով գտնուող տարածքը ձեռք բերած է 2013-ին: Անոնց նկատմամբ Մինասեանի սեփականութեան իրաւունքը արձանագրուած է 2016-ին:

Կադաստրի տրամադրած փաստաթուղթերէն պարզ կը դառնայ, որ այս առանձնատան սեփականատէրերու կազմին մէջ փոփոխութիւն չէ եղած առնուազն 2016-էն, եւ այն մինչ օրս կը պատկանի Վաչէ Պետրոսի Մինասեանին:

Արարատ Միրզոյեանին վերագրուող առանձնատունն ալ պարզուեցաւ, որ Կոտայքի մարզի Քասախ համայնքի Մուշ փողոցի թիւ 63-65 հասցէով է: Այս հասցէի կադաստրային փաստաթուղթերը կը փաստեն, որ առանձնատունը կը պատկանի Քաջարանի բնակիչ Արամ Աշոտի Մարգարեանին: Վերջինիս իրաւունքը այս հասցէներուն նկատմամբ արձանագրուած է 2018-ի Հոկտեմբերին: Տարածքին մէջ կառուցապատման աշխատանքներ սկսած են 2015-ին: Այս առանձնատունը վերջին տարիներուն չէ հանուած վաճառքի եւ, ըստ փաստաթուղթերուն, կը շարունակէ պատկանիլ Արամ Մարգարեանին:

Նախորդ Տարի Առաջին 1000 Մեծ Հարկ Վճարողներու Կողմէ Վճարուած Գումարները Կազմած Են Աւելի Սոս 4 Միլիար Տոլար

Հայաստանի Պետական Եկամտաներու Կոմիտէի պաշտօնական կայքին մէջ հրապարակուած է 2022 թուականի Յունուար-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին առաջին 1000 մեծ հարկ վճարողներու կողմէ վճարուած հարկերու եւ վճարներու վերաբերեալ տեղեկատուութիւնը:

Համաձայն Պետական Եկամտաներու Կոմիտէի տարածած հաղորդագրութեան, 1000 մեծ հարկ վճարողներու կողմէ 2022 թուականի Յունուար-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին պետական պիւտճէ ընդհանուր առմամբ վճարուած է աւելի քան 1 թրիլիոն 490 միլիարդ 115 միլիոն դրամ (մօտ 4 միլիարդ տոլար): Հարկային մարմին կատարուած վճարումներուն գումարը կազմած է աւելի քան 1 թրիլիոն 185 միլիարդ 839 միլիոն դրամ, իսկ մաքսային մարմին կատարուած վճարումներուն գումարը՝ աւելի

քան 304 միլիարդ 275 միլիոն դրամ:

1000 մեծ հարկ վճարողներու վերաբերեալ ցանկերը հասանելի են ՊԵԿ պաշտօնական կայքի «Հարկ վճարողներու վերաբերեալ տեղեկատուական ցանկեր» բաժնին մէջ:


Յանկը հրապարակուած է՝ հիմք ընդունելով ներկայիս գործող ՀՀ կառավարութեան 23.06.2022 թ.-ի N 928-Ն որոշմամբ սահմանուած չափորոշիչները, մասնաւորապէս, ցանկին մէջ ներառուած չեն ՀՀ պետական եւ համայնքային կառավարչական հիմնարկները:

Նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին հետ տուեալներու համադրելիութիւնը ապահովելու նպատակով ՊԵԿ-ը նոր մեթոտաբանութեամբ հրապարակած է նաեւ 2021 թուականի Յունուար-Դեկտեմբեր ամիսներուն վերաբերող ցուցանիշերը:

Ատրպէյճանի Յատուկ Ծառայութիւնները Ստեփանակերտի Բնակիչները Տարհանելու Մասին Կեղծ Փաստաթուղթեր Կը Տարածեն

Ատրպէյճանական յատուկ ծառայութիւնները Ստեփանակերտ քաղաքի բնակիչները տարհանելու վերաբերեալ կեղծ փաստաթուղթեր կը տարածեն: Այս մասին հաղորդագրութիւն հրապարակած է Արցախի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը:

«Արցախի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը, հետամուտ լինելով տեղեկատուական անվտանգութեան ոլորտում օրէնսդրութեամբ իրեն վերապահուած գործառնութիւնները եւ լիազօրութիւնները իրականացմանը, իրազեկուած է, որ ատրպէյճանական յատուկ ծառայութիւններն օգտագործելով Արցախի Հանրապետութեան քաղաքացիների ֆէյսպուքեան էջեր Ստեփանակերտ քաղաքի բնակիչներին տարհանելու վերաբերեալ կեղծ փաստաթուղթեր են տարածում՝ նպատակ ունենալով խուճապ տարածել բնակչութեան շրջանում: Կոչ ենք անում չտրուել կեղծ լուրերի եւ պահպանել հանգստութիւն: Արցախի Հանրապետութեան



ԱԱԾ-ն լիովին վերահսկում է իրավիճակը հանրապետութեան տարածքում:

Կասկածելի բովանդակութեամբ տեղեկութիւններ ստանալու դէպքում դիմէք Արցախի ԱԱԾ պաշտօնական կայքէջին կամ զանգահարէք թէժ գծի հեռախօսահամարներին՝ 047-94-41-26 եւ 41-26», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Հռոմի Պապը Կրկին Իր Մտահոգութիւնը Յայտնած Է Լաչինի Միջանցքին Հարցով



Հռոմի քահանայապետ Ֆրանչիսկոս Պապը Յունուար 29-ին կրկին իր մտահոգութիւնը յայտնած է Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի անօրինական արգելափակման վերաբերեալ: «Կը վերահաստատեմ իմ կոչը Հարաւային Կովկասի մէջ Լաչինի միջանցքին մէջ տիրող մարդասիրական ծանր իրավիճակին առնչութեամբ: Իմ մտերմութիւնս կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք ձմրան կէսին ստիպուած են դիմակայել այս անմարդկային պայմանները: Անհրաժեշտ է միջազգային մակարդակով գործադրել բոլոր ջանքերը՝ մարդոց բարօրութեան համար խաղաղ լուծումներ գտնելու նպատակով», ըստ Սուրբ Աթոռին մէջ Հայաստանի դեսպանութեան տարածած հաղոր-

դագրութեան յայտնած է Հռոմի պապը:

Որպէս աւանդույթին՝ քահանայապետը Անճելուս Տոմինի կիրակնօրեայ յաղօթքէն յետոյ հանդէս կու գայ միջազգային մտահոգիչ հիմնախնդիրներու առնչութեամբ, որ կը հեռարձակուի ռատիոյով եւ հեռուստատեսութեամբ ու լայնօրէն կը լուսաբանուի ընկերային ցանցերու միջոցով: Այս ուղերձը Հռոմի Պապը հնչեցուցած է Յունուարի 29-ի կէսօրին՝ Սուրբ Պետրոս հրապարակին վրայ հաւաքուած բազմահազար հաւատացեալներու առջեւ. Լաչինի միջանցքի մարդասիրական հետեւանքներուն Հռոմի Պապը անդրադարձած էր նաեւ անցեալ տարուան Դեկտեմբեր 18-ին:

Հայ-Թրքական Սահմանն Կը Հարցնեն Էրտողանին՝ Ինչո՞ւ Զեք Բանար Սահմանը. Կարօ Փայլան



Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր Կարօ Փայլան այցելած է հայ-թրքական սահման, ուրկէ դիմած է երկրի նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողանին: Ան այս մասին գրած է թուրիթըրեան գրառումով: «Հայ-թրքական սահմանն կը հարցնեմ նախագահ Էրտողանին՝

- Ինչո՞ւ չէք բանար սահմանը: - Ինչո՞ւ կը յետաձգեր այս քայլը, որ յեղափոխութիւն պիտի ընէ տարածաշրջանին մէջ: - Դուք չէ՞ք գիտեր, որ Հայաստանի հետ սահմանի բացումը պիտի փոխէ մեր երկրի արեւելքին ճակատագիրը», գրած է Փայլան:

Ատրպէյճան Կը Տարհանէ Թեհրանի Իր Դեսպանատան Աշխատակիցները



Տարհանման պատճառը դեսպանատան վրայ Յունուար 27-ի առաւօտեան տեղի ունեցած զինուած յարձակումն է: Այս մասին յայտնած է Ատրպէյճանի Արտաքին Գործերի Նախարարութեան Մամուլի ծառայութեան ղեկավար Այխան Հաճիգասթին: Իրանի ոստիկանութիւնը ձերբակալած է առաւօտեան Թեհրանի մէջ Ատրպէյճանի դեսպանատան վրայ յարձակում իրականացնող անձը: Այս մասին հաղորդած է Թեհրանի ոստիկանապետ, զօրավար Հոսէյն Ռահիմին: Ռահիմին նշած է, որ յարձակողը առաւօտեան մտած է դեսպանութեան շէնք եւ հրազենէ կրակ բացած է: Միջադէպին հետեւանքով 1 մարդ սպանուած է, եւս 2

հոգի՝ վիրաւորուած: Թեհրանի ոստիկանապետը նշած է, որ յարձակողը շէնք մտած է իր երկու երեխաներուն հետ: Նախաքննութեան ժամանակ որպէս հրաձգութեան շարժառիթ յարձակողը նշած է «անձնական եւ ընտանեկան խնդիրներ»: Ըստ Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութեան յայտարարութեան՝ յարձակողը զինուած եղած է Քալաշնիքովով: Երկու վիրաւորներուն վիճակը բարար է: Միւս կողմէ, նոյն օրը խումբ մը իրանցիներ հաւաքուած են Թեհրանի մէջ՝ բողոքելու Լաչինի միջանցքի փակման եւ Արցախի ժողովուրդի իրաւունքներու ոտնահարման դէմ:

Ատամ Շիֆ Յայտարարեց

Շարունակուած էջ 1-էն
նէն ներս կը ներկայացնէ ՕրենսՔառնթի Ըրվայնի շրջանը: Ատամ Շիֆ 23 տարիներէ ի վեր կը ներկայացնէ Փաստինա, Կլէնտէլ եւ Պըրպէնք հայաշատ քաղաքները: Ան Տանոլտ Թրամփի օրով Ամերիկեան տարողութեամբ նշանաւոր դարձաւ, երբ գլխաւորեց

նախկին նախագահի պաշտօնազրկումի առջին դատաւարութիւնը: Իսկ վերջերս ան մաս կը կազմէր Յունուար 6-ի Գափիթիթի շէնքի վրայ կատարուած յարձակումի քննիչ յանձնաժողովին: Շիֆ եւ Փորթըր անդամ են Դեմոկրատ կուսակցութեան եւ մեծ հաւանականութեամբ Մերակոյտի այդ աթոռը մնայ դեմոկրատներուն ձեռքը:

ՀՀ ԱԳՆ-ն Խոր Մտախոզութիւն Յայտնած Է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին Եւ Հայերուն Վրայ Յարձակումներու Առնչութեամբ



Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերու Նախարարութիւնը իր խոր մտախոզութիւնը յայտնած է Երուսաղէմի քրիստոնէական հաստատութիւններուն դէմ բռնութիւններու վերջին գործողութիւններուն առնչութեամբ: ՀՀ ԱԳՆ մամուլի խօսնակը Թուրիթըրի մէջ գրած է. «Մենք խորապէս մտախոզուած ենք բռնութիւնների եւ վանտալիզմի վերջին գործողութիւնների կապակցութեամբ՝ ուղղուած Երուսաղէմի քրիստոնէական կրօնական հաստա-

տութիւններին, այդ թւում՝ Հայոց պատրիարքարանին եւ Հին քաղաքի հայ բնակիչներին»: Աւելի վաղ Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի ղեկնապետ Հայր Աղան Կոկճեանը տեղեկացուցած էր, որ Երուսաղէմի մէջ փորձած են բարձրանալ Հայոց պատրիարքարանի տանիք եւ հանել խաչակիր եւ ՀՀ դրօշները, ինչպէս նաեւ երկու յարձակում կատարած են հայերու վրայ: Մինչ այդ ալ հրէայ ծայրահեղականները Երուսաղէմի մէջ յարձակած էին հայկական ճաշարանի վրայ:

Լաիէի Դատարանը Որոշումը Պիտի Կայացնէ

Շարունակուած էջ 1-էն
ջանքով», ըսած է Մամետով: Մինչդեռ հայկական կողմը նոյնինքն այդ կ'ընդօժէ, որ ինքնաշարժները միայն կարմիր խաչի ուղեկցութեամբ կ'անցնին, Արցախի բնակիչներուն համար կեանքի ճանապարհը փակ է: Հայաստանի ներկայացուցիչ Եղիշ Կիրակոսեանը ՄԱԿ-ի Արդարադատութեան Դատարանին անյապաղ միջոցներ կ'ակնկալէր, հակառակ պարագային Լեռնային Ղարաբաղի հայերը անհնարին ընտրութեան առջեւ պիտի կանգնին՝ թողել իրենց պապենական տուները, կամ մնալ այնտեղ եւ սովամահ ըլլալ: «Նախագահ Ալիեւը բացա-

յայտ պահանջել է, որ Լեռնային Ղարաբաղի հայերը հեռանան: Նա պնդել է, որ Ատրպէյճանի հիմնական պարտքը հայերին իրենց հողերից վտարելն է: Նա ասել է, որ հայերն ոչ մի երգ չի երգուելու, եւ, որ այսուհետեւ ատրպէյճաններէն է իշխելու այդ հողում», ըսաւ Կիրակոսեան: ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանին մէջ քննուեցաւ նաեւ Ատրպէյճանի հայրը ընդդէմ Հայաստանի: Պաքուն կը պահանջէ Հայաստանին պարտաւորեցնել դադրեցնել «ատրպէյճանական տարածքներու ակնապատումը»: Հայկական կողմը եւս երկու ժամ ունեցաւ հակափաստարկներ ներկայացնելու համար:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԶԵԿՈՅՑ
Կազմակերպութեամբ՝
ՄՂԿ Արեւմտեան Ամերիկայի Ներքին Դիւանի
Հայաստանի և Արցախի Իրադարձութիւններու Մասին
Հրատիրուած են Լոս Անճելըսի և շրջակայքի բոլոր ընկեր և ընկերուհիները
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 9 Փետրուար 2023,
Երեկոյեան ժամը 7:30-ին
ՀԿԲՄ-ի Փաստփնայի սրահին ներս:
1060 N Allen Ave. Pasadena, CA 91104

Massis Weekly

Volume 43, No. 4

Saturday, February 4, 2023

Azerbaijan Attempting to Depopulate Karabakh and Incite New War in the Region, Warns Pashinyan



YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan has warned that Baku is trying to not only depopulate Karabakh but also provoke a “new war in the region.”

“According to our information, Baku’s plan is to bring the economic and psychological pressure on Nagorno-Karabakh to a certain climax, then open the corridor for a few days in the expectation that Nagorno-Karabakh Armenians will leave their homes en masse, close the corridor again, then open it again for several days, and so on until the last Armenian leaves Nagorno-Karabakh,” he said

during a weekly session of his cabinet.

“But deporting the Armenians of Nagorno-Karabakh from their homes is not Azerbaijan’s only goal,” he went on. “With these provocative actions, Azerbaijan also aims to disrupt the peace agenda, the peace negotiation process and trigger a new war in the region.”

“It is clear, of course, that the closing of the Lachin Corridor and the humanitarian crisis created in Nagorno-Karabakh are very emotional for all of us. But I must emphasize the need for

Continued on page 2

Saint Sarkis Armenian Church in Texas Named US Building of the Year 2022



CARROLLTON, TX -- The Saint Sarkis Armenian Church in the north Dallas suburb of Carrollton, Texas, United States has received the most votes a World-Architects poll for US Building of the Year 2022.

“Designed by David Hotson Architect, the church reaches far back in time and thousands of miles across the globe to link itself with Armenian tra-

ditions and people,” World-Architects said in an article.

Saint Sarkis Armenian Church was consecrated on April 23, 2022, and held its first Sunday service one day later, on April 24, the traditional day for commemorating the 1.5 million victims of the 1915 Armenian

Continued on page 3



Declaration of the Three National Parties of Western USA

Տրդ դարուն հայը ունի լաւ կազմուած «կարծիք»: Ձեզի կարծիք մը տալու համար ըսեմ, թե՛ Աստուածաշունչի անգրանիկ թարգմանութեան մէջ ան գործածուած էր 50 անգամ, ու մեր Ոսկեղնիկը աւելի քան տասը բաղադրեալ բառեր ունի «կարծիք» բառով շինուած: Հայը իր Սուրբ Գիրքի մէջ կ'ընթերցէր հետեւեալ արտայայտութիւնները. «Կարծիք չարենաց», «Կարծիք վշտագին», «Ձի հաւատովք գնամք եւ ոչ կարծեօք»: Նոյն օրերուն գրաբարը կը վայելէր «կարծ» արմատով կառուցուած բառերու ճոխութիւն մը: Ահա քանի մը նմոյշ, որպէսզի ճաշակենք անցեալի պերճութիւնը. ԿԱՐԾ. «Տիրապէս դատեցիս, եւ ո՛չ ի կարծ», ԿԱՐԾԱԿԱՆ. «Կարծական եղեւ մեզ այս կեանքս», ԿԱՐԾԱԿԻՅ. «Ինձ լինել քեզ կարծակից», ԿԱՐԾԵԱԼ. «Հպարտութիւն կարծեալ գոռոզին», ԿԱՐԾԵԽՕՍ. «Ձնոսա կոչեմք մեք կարծեխօսս», ԿԱՐԾԵՅԵԱԼ. «Կարծեցեալ ճաճանչ»: Բարեպաշտ հայը իր պատարագի մէջ նաեւ կ'երգէ իր հաւատամքը ու կ'ըսէ. «Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք»:

Կարծիքներու Մատեան

Գրիգոր Նարեկացին իր Մատեանի մէջ արտայայտեց բազմաթիւ կարծիքներ, սակայն սակաւաթիւ են անոնք, որոնք հիւսուած են «կարծիք» բառով: Կը փափաքիմ մէջբերել երկու հատը, թե՛ որպէս ընտիր միտք եւ թե՛ որպէս քնարական արտայայտութիւն. «Անցեալն՝ անյայտ, եւ ապառնին՝ կարծողական», «Մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս, / Սոսկամ սասանեալ յամենայն կարծեաց»:

Մահուան կարծիք չունիմ

Միջնադարու հայ տաղասացը կատարելապէս կ'արտայայտէր իր ժամանակաշրջանի աշխարհիկ ոգին. վայելել էր կրօնական կեանքը ու անոր բարիքները, պաշտել բնութեան եւ գեղեցիկին: Վանեցի Նահապետ Քուչակը, կարծեմ 1530 կամ 1540 թուականն էր, կէս գիշերին, երբ «լուսինը կամար կապած» էր, տեսաւ, անսպասելիօրէն, յանկարծ, երազներուն ամենէն անոյշը. «Իմ եարն յերազիս եկաւ, ի սիրուն գէտ հարբած եղայ Յանկարծ ի քնուս լեյալ, լուսինկայ, ու խիստ կու ցոլայ»: Տարասաց խաչատուր Կեչառեցին, սարսափեցաւ, թե՛ այլեւս կ'աւարտի իր երկրային

կեանքը. «Հանգիստ չունիմ բնաւ ի քուն եւ արթնութեան, / Կարծեմ, թե՛ մերձեցաւ առ իս օր մահուան»: Իսկ մէկ այլ տաղասաց, որուն անունը չկրցայ ստուգել եւ իր մասին ձեզի սխալ կարծիք տալ չեմ ուզեր, ափսոսաց, թե՛ կը հեռանայ այս աշխարհէն առանց լիովին վայելած ըլլալու անոր շնորհները. «Ու մահուան կարծիք չունիլ: / Յանկարծ ցաւըն գիս էառ, / Ես ի իս աջէք մնացի»:

Սեկնած էր սրտես, կարծես...

20րդ դարու հայկական քնարը, 1908-1915 ժամանակաշրջանի եօթը երանելի տարիները նկատի ունիմ, կարծեց, թե՛ կը թուչէր: Ազգային եւ անձնական կարծեցեալ ոգեւորութեան մէջ մեր բանաստեղծները կարծես, թե՛ գրեցին հոգիներ պարուրող մեր ամենէն նուրբ քերթուածները: Մակայն քիչեր գործածեցին «կարծիք» բառը: Բացառութիւն է Վահան Թէքէեանը: «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութեան մէջ տեսանք նաև մը, որ եկած էր մեծ աղէտէն մեզ փրկելու. «Ու հեռուն, կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նաև մ'է ծփուն»: Թէքէեանը, կարծեմ սխալ չըլլար, եթէ ըսեմ թե՛ պղատոնական սիրոյ ասպետ մըն էր: Ան գոհ էր լոկ գեղեցիկի յիշատակներով: Եւ օր մը, գիշեր էր, մենութեան խաղաղ ժամերուն, յանկարծ, «Իր գրկին մէջ, կուրծքն ի» վեր հիւր մը յայտնուեցաւ. «Քու յիշատակդ, այս գիշեր, գիս լալու չափ կը յուզէ. / Կարծես մեկնած էր սրտէս, եւ գաղտնաբար այս գիշեր / Ես կը դառնայ, իր հին տեղն ու հին գգոնանքը կ'ուզէ»: Այդ օրերուն Գրիգոր Ձոհրապը հեղինակեց նորավէպ մը ու գայն կոչեց՝ «Կարծեմ թե՛»:

Սէկը ինձ է երազում, կարծես, թե...

Հայկական գեղապաշտ գրականութեան արեւելեան ճիւղի մէջ, Վահան Տէրեանն է գրեց անուրջներով,

ցնորքներով եւ երազներով ձեւաւորուած կարծիքներ: Տէրեանի «Միջնադարի Անուրջներ» ժողովուածուն, անկասկած, ընտիր փունջ մըն է անձնական վառ ու յուզական կարծիքներու. «Կարծես կանչուած է ինձ մի քնքոյշ ձեռք... Իմ մոլոր ճամբին դու անկարծ իջար... Գուցէ դու յանկարծ «պատահմամբ» դուրս գաս, կարօտս, գուցէ, դու յանկարծ գգաս... Արձակ դաշտերի ամալութեան մէջ նա մեղմ շշնջաց, կարծես թե՛ սիրոյ քնքոյշ խօսք ասաց նիրհող դաշտերին... Կարծես թե՛ մէկը ինձ է երազում», 1908:

Անհնար կարծիքներ

Խորհրդային Հայաստանի տարիներուն, հասարակութիւնը կը կարծէր, թե՛ Պարոյր Սեւակը անհնար պահանջներ ունի: Առանց ոեւէ մէկուն կարծիքը հարցնելու յօրինելու վարժ բանաստեղծը գայրացած գրեց. «Ես ուզում եմ, ձեր կարծիքով անհնար... Թո՛ղ, այդ դէպքում, կանայք ծնեն առանց ցաւի, Երկրները պատերազմեն, սակայն առանց արեան ծովի, Հրդեհները առանց հրի թող ճարակեն, Մարդիկ իրար առողջութեամբ թող վարակեն»: Ապա շարունակեց սեւակեան կարծիքներու ալիքը. «Ես կարծում եմ. երբ որ ջուրը / Վարարում է, ելնում ափից, / Թոյլտուութիւն չի վերցնում / Իրեն հակող նեղ քարափից... Ես կարծում եմ. պաղն աւելի / Լաւ ես գգում ամրան շոգին»:

Սիջազգային համաժողով կարծեցիք

Պոլսահայ արդիական բանաստեղծութեան ամենէն կարծիքաւոր բանաստեղծը Ձահրատն էր անկասկած: Անոր գործերու մէջ կարդացիք բազմաթիւ անկարծելի եւ խոհական միտքեր, ինչպէս՝ «Խիճերն աղամանդ կարծող միամիտ հոգույս բարի խաբկանք», «Արդէն ամէն ինչ յանկարծ կը պատահի արագութիւններու այդ կարգուսարքին մէջ», «Չար հոգիս դուն... որ գեղեցկութեամբ թափանցիկ, կարծել կու տաս, թե՛ նոյնքան ալ

դիւրին է թափանցել / մտերմութեանդ», «Շատեր գիս փշաթել՝ երկաթէ դուռ կը կարծեն»: Ապա Ձահրատը բացատրեց, թե՛ ո՛վ էր իր գրական հերոսը՝ Կիկոն. «Կիկո խոնարհ մօտ էր հողին այնքան / Որ դուք գինք / արմատ կարծեցիք»: Իսկ օր մը ծանօթացանք Կիկոյի, ներեցէ՛ք արտայայտութիւնս, յետոյքին հետ.

Ինչ կարծեցիք

Դրօշագարդ գրօսանալ Թէ կրկեսի հսկայ վրան խայտարէտ Դուք Կիկոյին յետոյքը ինչ կարծեցիք Տաս տասներկու կտոր գոյն գոյն կարկտան Սիջազգային համաժողով կարծեցիք: Ժամանակակից կարծիքներ

Այսօր հայը կարծիք յայտնելու դժուարութիւն չունի: Հայը, շնորհիւ «կարծիք» բառով շինուած բազմաթիւ պատկերալից խօսքերու, իր մտքի եւ գրոյցներու մէջ կը կազմէ, կը յայտնէ, կը ներկայացնէ, կ'ունենայ կարծիք: Հայը ունի «հասարակաց», «նախաժաման», «ազատամիտ», «անձնական» կարծիքներ:

Մամուլը կը կարծէ, թէ

Հայկական մամուլը մեզի ցոյց կու տայ, թե՛ հայրենիքի մէջ աշխարհային ինչ կարծիքներ շրջանառութեան մէջ են ու գրաւիչ են ընթերցողի համար. «Չեմ կարծում՝ բանակի սպառազինութեան համալրման հարցերը հրապարակային պէտք է քննարկենք», վարչապետ Ն. Փաշինեան, «Հինգ ամիս չէի ընդունում, որ ողջ եմ, կարծում էի տեսիլքի մէջ եմ», Ժամկէտային գինձառայող Սերգէյ Համբարձումեան, «Կարծում եմ երրորդ համաշխարհային պատերազմն անխուսափելի է», Մանկավարժականի նախկին ուսուցիչ, «Չեմ կարծում, որ գերութիւնից վերադարձածներին պէտք է բանա-

Շար.ը էջ 15



BINGO NIGHT PARTY

FRIENDS, FUN, PRIZES

COME JOIN US FOR A FUN AND EXCITING NIGHT

Ticket donation: \$30
Includes Plate of Falafel or Chicken Shawarma, Soft Drink and **ONE** Round of **BINGO**.
FRIDAY, February 10, 2023
Starting at 7:30 P.M.

AEBU CENTER
Location: 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104
For more information, contact Karine (818) 324-0574



Դասադուլ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մի քանի ամիսներ էին անցել Իրանի իսլամական լեզվափոխություններից, աստիճանաբար նոր վարչակարգը ամրապնդում էր իր դեկավարման օրգանները՝ իսլամական կարգ ու կանոն հաստատելու երկրում: Դժուար թէ կարճ ժամկետով լեզվափոխականացած երկրում ամեն ինչ կարգաւորուէր, մանաւանդ՝ Իրանի պէս մի հսկայ երկրում մշակույթներով տարբեր ժողովուրդների օրրանում: Այո՛, դեռ ժամանակի կարիք էր զգացւում երկրի նոր վարչակարգը ամրապնդել, ժողովուրդը վարժուէր նոր դրուածքի հետ, այդուհանդերձ դրութիւնը կառավարելի էր, ոչ մտահոգիչ, սակայն անսպասելի դէպքերով յղի:

Ահա այս իրավիճակում տեղի ունեցաւ լեզվափոխութեան առաջին տարուակ դպրոցական վերամուտը: Իրանում դպրոցական կեանքը սկսւում է Սեպտ. 21-23ին, պարսկական Մեհր ամսի մէկից:

Արդէն մէկ ամիս էր դպրոցական աշխատանքներն սկսել էին:

Դպրոցական օր է, հոկտ. 24, 1979 թիւ, Նարմաք քաղաքամասի իմ բնակարանից քայլում եմ դէպի «Յովհաննէս Թովմասեան» երկսեռ ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցը: Նա գտնւում է Ջարքէշ քաղաքամասում: Ջարքէշը եւ Նարմաքը միացնող գետի աջ ափում: Նարմաք եւ Ջարքէշին յաջորդող Վահդիէ ու Արբաբէհէ չորս քաղաքամասերը միասնաբար ամենահայտնի են Թեհրանում, որոնք հայ կոմիտէների կողմից անուանուեցին՝ «Սասուն», այլ հայաբնակ քաղաքամասեր որպէս Մաշիդիէն՝ «Ձէյթոն», իսկ Հեշմաթիէն՝ «Սարգարբադ»: Հայրենասիրական հոյակապ մտայնացում, պատմական դիւցազնական մարտերի տեղանուններ, որոնք անմոռանալիօրէն մեզ շարունակ պիտի յիշեցնեն մեր մարտնչող հերոսների դիմադրողական եւ յաղթական գոյամարտի գուպարները մեր արիւնարբու թշնամու դէմ, այդ ոգով ու շնչով ապրելու կորուսեալը ետ բերելու նոր յաղթական մարտերով: Այս անուանակոչումները միայն ներքին հայկական գործածութիւն ունեն, ոչ՝ պաշտօնական:

Կեանքը ընդհանրապէս սկսւում է արեւագալի ծէգից եւ հերթականօրէն աշխուժանում է: Աշնանային առաւօտ է, գեղեցիկ ու զով, յիշեցնում է գարնանային գաղջ օր, արեւը սարերի ետեւից գլուխն է պարգել անամպ երկնակամարից սփռելով ոսկեհիւս ճառագայթները՝ հաւասարապէս բաշխելով բոլորին կենսատու լոյսն ու ջերմութիւնը:

Ճամբիս նկատուում են ծառերից թափուած կենսագուրկ տերեւներ, արմատի սնունդից զրկուած, որոնք տրորուում են քայլերի տակ խշխշոց ձայներ արձակելով, մայր հողից կտրուածը նոյնպէս այդ ճակատագրին է ենթակայ, չինարի ծառերից են գետնին թափուել, հրաշալուց բնութիւնը իր դերումն է իր կարգ ու սարքով եւ իր չորս եղանակների դրութեամբ գործող: Աշակերտներ խումբ-խումբ, պոչ-պոչի շարքերով, դպրոցական տարագներով, նրանց անհոգ ու երջանիկ խիղճ ու ծիծաղով է լցւում մթնոլորտը՝ դպրոցի ճամբէն, շրջապատը:

«Սասուն» քաղաքամասում ոչ հեռու հարեւանութեամբ շուրջ տաս

հայկական դպրոցներ են գտնուում հոծ թւով աշակերտների ներկայութիւն տարբեր օղակներում՝ մանկապարտէզից մինչեւ միջնակարգ, կարելի է ասել ողջ բոլորքն ու շրջապատը հայկականութիւն է բուրում՝ հայկական դպրոցներ, հայ խանութպաններ եւ հայ խիտ բնակչութիւն: Սակայն մեր ներկայ օրերի դրութեամբ թէ՛ դպրոցների թիւն է պակսել եւ թէ՛ աշակերտութեան:

Դպրոցի ճամբով քայլելիս աջ ու ահեակ լսում եմ.

-Բարի լոյս պարոն, բարի լոյս պարոն:

Դպրոցի աշակերտներից են, քաղցրութեամբ ընդունում եմ նրանց բարեւները եւ պատասխանում եմ գորովալից.

-Բարի լոյս աղջիկս, բարի լոյս տղաս:

Դպրոցի հսկայ երկաթէ դարպասից ներս եմ մտնում եւ ուղղւում դէպի շէնքը, որի մուտքին մօտիկ պատուանդանի վրայ գետեղուած է՝ Յովհաննէս Թովմասեանի կիսանդրին անաղարտ եւ կարծր մոխրագոյն քարից կերտուած, քանդակուած:

Մի հոյակապ արդիական կառուցով դպրոց նկատելի հայկական որոշ մոտիւններով՝ ճարտարապետական նմուշներ: Դպրոցը կառուցուել է Պապիկ Թովմասեանի (հանգուցեալ) ջանքերով ու գուրգուրանքներով, իր ծախսերով եւ իր անմիջական հսկողութեամբ նուիրուած հօր յիշատակին: Նրա ճարտարապետն է եղել էդիկ Այուլագեանը, որն օգտագործել է հայկական ճաշակ, ձիրք եւ բարձրարժեք ստեղծութիւն: Այս դպրոցը, ոչ թէ սովորական, այլ՝ կամաքի նմանող բացառիկ կառուց է օժտուած արդի դպրոցական յարմարութիւններով՝ հողային մեծ տարածքի վրայ՝ ամֆիթատրոն, տարրալուծարան, մարզանքի դաշտ եւ այլն, հողային մեծ տարածքի վրայ: Դպրոցը իր տասնեակ տարիներից աւելի մեծ ազգօգուտ ծառայութիւն է մատուցում լոյս ու գիտութիւն եւ ազգասիրութիւն սփռելով մեր ժողովրդի գաւակներին իր լուսաճաճանչ կամարների ներքոյ հնչեցնելով հայապահպանման ղօղանջներ: Դպրոցն ունի իր անմոռանալի եւ հետաքրքիր քաջքշուքներով պատմութիւնը...: Ինչ կը լինի այս հսկայ դպրոցի վիճակը աշակերտութեան թիւը պակսելով: Արդէն տարիներ է, դպրոցը գտնուում է պետական կրթական նախարարութեան հսկողութեան ներքոյ:

Ուսուցչարան եմ մտնում, բարի լոյս ասելով ներկայ ուսուցիչ ուսիներին տեղաւորուում եմ բաց աթոռին նրանց կողքին:

-Պրն. Ռուբէն այսօր դասարան չկայ.

Դպրոցի վերակացու՝ տիկ. Սիրանն (հանգուցեալ) էր:

-Ինչո՞ւ, միթէ՞ ինչ է պատահել:

Հետաքրքրուած հայեացքով հարց եմ տալիս վերակացուհուն:

-Միջնակարգ դասարանների աշակերտները դասադուլ են յայտարարել:

-Ի՞նչ, դասադուլ, ի՞նչ նպատակով:

-Աշակերտները առաջարկներ են ներկայացրել տեսչութեան, անիւրականալի պահանջներ, չի ընդունաւ ջուրը եւ այս պատճառով դասարան չեն գնում:

Շտապում եմ հանդիպելու տես-

չուհուն՝ տիկ. Աստղիկ Բաբայեանին (հանգուցեալ), երկար տարիների կարող եւ գործունեայ տնօրէնին: Տեսչարանում հաւաքուել են մի քանի ուսուցիչներ, նրանց դէմքերին նշարուում է յուզմունք եւ վրդովմունք: Խօսում են, ելքեր առաջարկում, մերթ փսփուքով, մերթ բարձրաձայն քննադատում եւ մեղադրում դասադուլ անողներին:

-Եղբա՛յր, սրանք դուրսից են, փէյքարիքն են, խառնում են, զրգուում են աշակերտութեան տեսչութեան դէմ:

-Նրանց են միացել միամիտներ եւ կրակը թէժացնում են:

-Պէտք է նրանց դպրոցից վճռել անմիջապէս, եթէ ոչ ամբողջ դպրոցը կը վարակուի:

Ոչ մի խօսք գնաց դասադուլ անողների պահանջումից եւ իրենց հետապնդած նպատակից:

Գրեթէ բոլոր դպրոցներում էլ քիչ թէ շատ այս շփոթ վիճակն էր տիրում, վարչակարգի փոփոխութիւն էր տեղի ունեցել, նոր մարդիկ պիտի անցնէին գործի գլուխ՝ նոր օրէնքներով եւ նոր քաղաքականութեամբ:

Փէյքարիքը իբր լեզվափոխական կազմակերպութիւն պայքարում էին շահի ժամանակից իրենց պաշտօնը շարունակող գլխաւոր պաշտօնեաների դէմ շինծու եւ ստահոտ լուրեր տարածելով՝ խառնաշփոթ վիճակ եւ անվստահութիւն առաջացնելու նպատակով:

Արդէն ընթանում եմ եղելութիւնը, լուռ ու մունջ թողնում եմ տեսչարանը եւ քայլում եմ դէպի բակ: Հնչում են ոչ յստակ լուրերներ, մօտենում եմ շուրջ կազմած մի խումբ աշակերտների, փոխադարձ բարեւներից խառնում եմ նրանց մէջ, բարձրակոչ յայտարարուում է իմ միանալս իրենց հետ: Ծխախոտի գլանակը շուրթերիս հրահանով վառել եմ ուզում, սակայն մի քանի հոգիներ խնդուքով վռազ ձեռքները դէպի իմ կողմը մեկնած, թէ.

-Պարոն, պարոն, չվառէ՛ք:

Ամէն ինչից անտեղեակ, շփոթուած, թէ.

-Ինչո՞ւ չվառեմ, միթէ՞ ինչ կը պատահի:

-Պարոն, շրջապատը կրակ կը բռնի:

-Ինչպէ՞ս թէ կրակ կը բռնի:

-Դպրոցի շուրջի հարեւանները օղի են քաշում, այլքոհոլի գազով է պատած դպրոցի մթնոլորտը:

Բոլորս միասին քահ-քահ ծիծաղում ենք, այսպիսով ուրախ տրամադրութիւն է ստեղծուում մեր մէջ:

Դա իրականութիւն էր, աննշան թւով հայ տներ մղուելով պաշտօնական յայտարարութիւնից, թէ՛ քրիստոնեաներին թոյլատրուում է իրենց սեփական գործածութեան համար այլքոհոլի խմիչք պատրասել, այդ հիման վրայ առիթը շահագործուում էր: Ասկայն այս մենաշնորհ վիճակը դարձաւ պատուհաս, որոշ հայ երիտասարդներ ձգելով արհեստը զբաղուեցին օղեվաճառութեամբ:

Ուրախ ու ժպտուններես դիմում եմ աշակերտներին.

-Տղերք ջան, ի՞նչ է պատահել ձեզ, ինչո՞ւ դասարան չէք գնում:

Չորս կողմերից դերակատարները խոնարհ են շուրջս եւ հնչում է պատասխանը.

-Պարոն, դասարան չենք գնայ, մինչեւ մեր պահանջները ընդունուեն, մեզ էլ միանալու են միւս դասարանները, վճռականութեամբ պնդեցին:

-Ի՞նչ պահանջներ, դպրոցն իր դերի մէջ է, չի շէք աշակերտի պարտականութիւնները, ինչ նպատակներով է դպրոց գալիս, լաւ իմացէք, որ դպրոցը ուսման վայր է, ոչ թէ՛՝ անկարգութիւնների:

Նրանք ինչ են ներկայացնում առաջարկների գրութեան մէկ պատճէն, բարձրաձայն կարգում եմ առաջարկները մէկ-մէկ բացատրութիւն պահանջելով եւ մեկնաբանելով՝

-1.- Սահմանափակուել տեսչութեան եւ վերակացութեան իրաւունքները:

Կանգ եմ առնում աւելի լուսաբանուելու համար:

-Պարոն, այլեւս չենք ուզում տեսչութիւնը, նրանք խիստ են վարուում, ասում են. -համազգեստ պիտի հագնել, ամենաչնչին ուշանալու վրայ վերակացուս բղաւում է մեր վրայ եւ չեն թողնում դասարան մտնելք, այլեւս փոխուել են պայմանները, մեր ուզեցածին պէս պիտի վարուեն:

Լսելով նրանց յորդորում եմ.

-Այ տղաներ, որտեղ էք տեսել աշակերտների ցանկութեամբ դպրոց կառավարուելի, դպրոցը սրբազան առաքելութիւն ունի լոյս եւ գիտութիւն սփռելու, ապագայ ուսեալ մարդ պատրաստելու, դպրոցը կարգ ու կանոն ունի աշակերտների թերացումները զգուշացնելու համար, եթէ խստութիւն չլինի, դպրոցը կը մատնուել անտէրութեան:

-2.-Մեր հայերէն դասագրքերը բարդ են եւ դժուար հասկանալի, մեր պատմութիւնը թագաւորութեան պատմութիւն է, իսկ ուղղագրական կանոնների գրքոյկը՝ գայլ ու աղուէսի պատմութիւն, ուզում ենք բոլորը փոխուեն:

-Ինչպէս կարելի է պատմութիւնը փոխել, միթէ՞ պատմութիւնը հագուստ է: Պատմութիւնը գրուել է փոխանցուել է մեզ, իւրաքանչիւր երկիր եւ ժողովուրդ իր սեփական պատմութիւնն ունի, մերն էլ այս է, որ համառօտ դասաւանդուում է, իւրաքանչիւր հայ պիտի իմանայ իր երկրի եւ ժողովրդի պատմութիւնը, չիմացողը կը նմանի արմատից գուրկ ծառի, որ կտրուելու է իր ժողովրդից՝ ազգային արժէքներից պարպուած օտարական: Դասագրքերի կապակցութեամբ մտածուում է:

-3.-Թոշակների սակը բարձր է, շատեր պետական դպրոց են գնում չուսնեալու պատճառով:

-Այս վիճակում էլ դպրոցը պիւտճէի բաց ունի...

Ընդմիջումներ եւ հակաճառութիւններ...

-Չէ՛, պարոն, թոշակը բարձր է, չուսնեք, հայրս չի աշխատում...

Շարունակուում եմ ընթերցումը.

-4.-Իրաւունք տրուել, որ դպրոցում ազատօրէն քաղաքական աշխատանք տանել:

-Դպրոցը քաղաքական եւ կուսակցական վայր չէ, շեղում եւ շփոթութիւն կ'առաջացնի ուսման կեանքում, դպրոցը ուսում եւ գիտութիւն ջամբելու սուրբ տաճար է, աշակերտը պիտի զբաղուի իր դասերով, միտքն ու հոգին զարգացնի շատ զրքեր կարգալով, գիրքը անձրեւի նման բեղնաւոր է դարձնում մարդուս էութիւնը:

Քաղաքականութեամբ զբաղուելը ուսման աւարտից յետոյ:

-5.-Աշակերտութեան արտաժամեայ իրաւունք տրուել օգտուելու դպրոցի միջավայրից:

-Այդ արտօնութիւնը կախում

Հայկական Գիտական Եւ Արհեստագիտական (FAST) Հիմնարկութեան Մամլոյ Ասուլիսը Կլէմտայի Սէջ



Երկուշաբթի Յունուար 30-ին 2023, Կլէմտայի Պրէնտիլու հանդիսարահին մէջ, տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս մը, կազմակերպութեամբ Հայկական Գիտական Եւ Արհեստագիտական («Թէքնոլոճի») Հիմնարկութեան, որ ծանօթ է նաեւ FAST անունով (Foundation For Armenian Science and Technology):

Սոյն կազմակերպութեան գործադիր տնօրէն Արմէն Ուրուճեանի հրահրին ընդառաջ էին Լուս Անճելուսի հայ մամուլի եւ տեղեկատուական ընկերութիւններու ներկայացուցիչները:

2017ին հիմնուած FAST-ը ոչ հասութեամբ կազմակերպութիւն մը ըլլալով, կը նպատակադրէ քաջալերել եւ խթանել գիտութիւնն ու արհեստագիտութիւնը, որպէս զի նորարարութիւններով յառաջդիմութիւններ արձանագրուին Հայաստանի մէջ եւ անկէ ալ անդին:

Իմացանք որ այս տարուան իրենց աշխատանքային ծիրէն ներս ընդգրկուած են կրթնական ստացող 180 ուսանողներ, որոնք կը զբաղին հետազոտութիւններով: Այս առիթով կարեւոր գործօն մը կը համարուի երկրին կայունութիւնն ու ապահովութիւնը: Նախաձեռնողներն այս առնչութեամբ կապ պիտի հաստատեն համաշխարհային եւ տեղական անուանի գիտնականներու եւ ուսանողութեան հետ: Անոնք՝ սերտ կապեր պիտի հաս-


տատեն Հայաստանի բոլոր շրջաններուն մէջ, երեւան հանելու եւ յայտնաբերելու ուսման ու յառաջդիմութեան ծիրէն ներս:

2023 թուականին համար ծրագրուած է միջոցառումներ կայացնել Լուս Անճելուսի եւ Պոսթոնի մէջ: Այլ քաղաքներու մէջ եւս միջոցառում տեղի պիտի ունենան, որոնց ծանուցումը պիտի կատարուի մօտ առնէն: Յառաջիկայ «Յառաջդիմ Արմինիա» «Կալա» տեղի պիտի ունենայ Մայիս 11-ին, 2023: Օրուան գլխաւոր բանախօսն է Նոպելեան մրցանակի Դափնէկիր Արտեմ Փաթախութեան, փրոֆեսոր՝ Scoups հետազոտական հիմնարկի եւ քննիչ Howard Hughes բժշկական հաստատութեան:

Նշենք նաեւ որ 2022-ին «Յառաջդիմ Հայաստան» կրթնական ստաներու համար կազմակերպուած մեծ միջոցառումին (GALA) հանգանակուած էր 1.4 միլիոն տոլար: Արդարեւ, այդ կրթնական ստանը նոր հետազոտութիւններ կատարող խումբեր Հայաստանի մէջ: Անոնք պիտի մասնագիտանան համաշխարհային մակարդակով, մրցունակ նոր հետազոտութիւններու եւ միջազգային համբաւ ունեցող գիտնականներու ղեկավարութեան ներքեւ:

Յաջողութիւն սոյն հայրենանուէր նախաձեռնութեան: Գ.Մ.

«Յերոսների ճամբորդութիւնը» ԱՆԻ Կեդրոնը ԱՄՆ-Ում Վերահրատարակել Է Ջօրավար Անդրանիկի Եւ Վաղարշակ Շահինեանի Մասին Պատմող Հատորը



Հայկական ուսումնասիրութիւնների ԱՆԻ կեդրոնը օրերս ԱՄՆ-ում անգլերէնով վերահրատարակել է «Յերոսների ճամբորդութիւնը» գորավար Անդրանիկ եւ

Վաղարշակ Շահինեան» (The Journeys of Heroes: General Antranig, Vaghshag Shahinian) հատորը: Հատորի խմբագրներն են Թաթուլ Յակոբեանը եւ Փոլ Շահինեանը:

Դասախօսութիւն Վիշապաքարերու Մասին



Յունուար 27, 2023, Ուրբաթ օր, Փասատենա քաղաքի Հայկական Ճեմարանի (Blair School Armenian Academy) մէջ վիշապաքարերու մասին դասախօսութիւն մը տուաւ Երեւանի Պետական Հումանիտար քոլեճի դասախօս, Պատմամշակութային արգելոց-թանգարաններու եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն ՊՈԱԿ-ի աշխատակից, հնագէտ, պատմաբան, բազմաթիւ աշխատաւորութիւններու եւ յօդուածներու հեղինակ Արտաւազ Զաքեանը: Հիւր դասախօսին կ'ընկերակցէր քաղաքիս Արարատ-Էսքիճեան թանգարանի տնօրէն Սիմոն Մանվաթեան-Կոչինը: Փասատենա քաղաքի Հայկական Ճեմարանը, իր աշակերտներուն հայեցի լիակատար դաստիարակութիւն եւ ինքնաձեռնաշուք տալու համար կը շարունակէ մասնագէտ դասախօսներ հրահրել: Այս ծրագրին ներս, քաղաքի մէջ հիւրաբար գտնուող Արտաւազ Զաքեանը եկաւ դպրոց ու խօսեցաւ նուազ ծանօթ նիւթի մը մասին՝ վիշապաքարեր:

Հիւր դասախօսը նախ շնորհակալութիւն յայտնեց հրահրին եւ դպրոցի գրադարան-լսարանի մէջ հաւաքուած աշակերտներու հետաքրքիր ներկայութեան համար, ապա հակիրճ ձեւով ներկայացուց իր աշխատանքի ասպարէզը, բազմաթիւ արգելոց-թանգարաններու, յատկապէս Մեծամորի ամրոց-բնակավայրի մէջ իր կատարած աշխատանքները: Վիշապաքարերու նուիրուած հիմնական դասախօսութեան մէջ ան լուսանկարներով ցոյց տուաւ վիշապաքարերու ընտիր նմուշներ, կատարեց նախադարեան այդ վիթխարի յուշակոթողներու նկարագրութիւնը, խօսեցաւ անոնց պաշտամունքային եւ ծիսական նշանակութեան մասին ու բացատրեց նաեւ, թէ այսօր վիշապաքարերը ինչպէս կը ցանկագրուին, կը

պահպանուին եւ նոյնիսկ հանրային եւ միջազգային ցուցադրութիւններու մաս կը կազմեն: Բանախօսը նշեց, թէ վիշապաքարերը իւրապատու են Հայկական Լեռնաշխարհին, անոնք կը գտնուին բարձրագոյն լեռնագագաթներու վրայ, ջրային աղբիւրներու, լիճերու եւ արհեստական ջրամբարներու մօտ: Վիշապաքարերու բարձրութիւնը կը հասնի մինչեւ 5 մ. (15 ոտք): Անոնք միակտոր քարեր են, որոնք ունին ձուկի եւ ցուլի տեսք, ինչպէս նաեւ? օձ, արագիլ, եւ այլ կենդանիներ պատկերող քանդակներ: Իւրաքանչիւր վիշապաքար ունեցեր է նաեւ արարողական ճանապարհ, ուր, ըստ պատմաբաններու կարծիքի, հատկապէս թափոններ կատարուած են:

Ապա Ա. Զաքեանը ցուցադրեց երկու տեղեկատուական շարժանկարներ, ուր Արագած եւ Գեղամայ լեռներու խոնարհած վիշապաքարեր, արշաւախումբի աշխատանքի շնորհիւ կը կանգնին ու կը դառնան գբօսաշրջիկներու համար հետաքրքրութեան նոր կէտ:

Մասնագետները կը կատարեն նաեւ վիշապաքարերու քարտիզագրութեան աշխատանք: Ըստ անոնց պատրաստած քարտիզի Հայկական Լեռնաշխարհի մէջ մինչեւ այսօր յայտնաբերուած են 150 վիշապաքարեր, որոնց 90 հատը կը գտնուին Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս:

Դասախօսութեան աւարտին աշակերտները հարցումներ ուղղեցին Ա. Զաքեանին ու անոր նուիրեցին շնորհակալական բացիկ մը եւ Հիւսիսային Քալիֆորնիոյ մէջ հայկական գինեգործ ընտանիքի կողմէ արտադրուած գինի: Իսկ Ա. Զաքեանը դպրոցի հայկական գրադարանին նուիրեց Հայաստանի պատմամշակութային յուշարձաններուն նուիրուած պատկերազարդ գիրքերու խմբակ մը:

Հաղորդագրութիւն դպրոցէն

նը, թարգմանիչը՝ Հեղինար Մելքոն Մելքոնեանը: Առաջաբան են գրել Ռիչարդ, Քեն եւ Քարոլ Սարաճեանները, ինչպէս նաեւ առաջաբան ու ներածութիւն՝ Փոլ Շահինեանը: Հայագիտական արժէքաւոր այս աշխատութիւնը ներառուած է երկու առանձին պատմութիւն՝ Եղիշէ Քաջունու Ջօրավար Անդրանիկ - Հայկական առանձին հարուածող գործունակ օրագրութիւնը եւ Սարդարապատի հերոսներից Անդրանիկ Շահինեանի հարցազրոյցը, որ արուել է նրա կեանքի մայրամուտին՝ 1953-ին, ԱՄՆ-ում:

1919 թուականի ապրիլ Հայաստանում անցկացրած մէկ տարուայ մանրամասն պատմութիւնն է: Վաղարշակ Շահինեանը 1918-ին իր 1100-հոգանոց աշխարհագորային բանակով մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Նա ծնուել էր 1889-ին, Վանում: 1910-ին մեկնել էր ԱՄՆ, սակայն կարճ ժամանակ անց վերադարձել, մտել գինուորական ծառայութեան եւ մասնակցել առաջին աշխարհամարտին: Յետագայում նա կրկին մեկնել է ԱՄՆ՝ ծառայելով պիզնես գործունէութիւն: Մահից յետոյ՝ 1976 թուականին, նրա աճիւնից մի բուռ հող բերուել է ամփոփուել է Սարդարապատի յուշահամալիրի արծիւների ճեմնուղու առաջին արծուի մեծազիւր քանդակի մերձակայ հաստատում:

Մաշտոց Գոլեճի Վերաբացում

Շարունակում է 11-ին

վկայականը: Ի՞նչ կը մտածեք ընել այս առնչութեամբ:

Ծրագրել ենք հետեւողական աշխատանքներ տանել քաղաքային եւ նահանգային մակարդակով կրթական օջախներին հատկացուելիք պետական օժանդակութիւնից օգտուելու ուղղութեամբ, ինչը իրականութիւն դառնալու դէպքում կը թեթեւացնի գոլեճի հոգսերը:

Տեղին է նշել, որ անուրանալի է եւ ինչպէս երախտագիտութեան ջերմ խօսքեր չուղղել այն բազում նախկին նուիրատուներին եւ հովանաւորների հասցէին, որոնց առատ լուծումների շնորհիւ գոլեճն այսօր տարիներ բազում եւ լուրջ դժուարութիւններ է չաղթահարել:

Մեր կանխայայտ եւ խորին շնորհակալութիւններն ենք յղում նաեւ ներկայ ու ապագայ նուիրատուներին, որոնց ստաբուլ նուիրատուութիւնների շնորհիւ Մաշտոց գոլեճը պատմութիւն պիտի կերտի:

Ջերմ յարաբերութիւնները մեր հայրենակիցների հետ շարունակական են լինելու եւ անխօս ակնկալում, որ մեզ գորավիզ կանգնեն:

Պակաս մտահոգիչ չէ նաեւ սեփական շէնքի, տարածքի գոյու-

թեան պակասը:

Քաջածանօթ եմ, որ տարբեր հանդիպումների ժամանակ այս հարցը յաճախակի է քննարկման առարկայ է եղել եւ մնացել անիրականանալի:

Ես հաւատում եմ հրաշքների եւ ապրում եմ այդ հաւատով:

Ականջալուր ենք լինելու բոլոր տեսակի կարծիքներին ու տեսակէտներին եւ պատրաստ ենք համագործակցելու բոլոր այն անհատների, կազմակերպութիւնների, կրօնական կառույցների եւ կրթական հիմնարկութիւնների հետ, որոնք համահունչ են մեր որդեգրած ծրագրերին ու կը նպաստեն Մաշտոց գոլեճի հեղինակութեան բարձրացմանը:

Մաշտոց գոլեճի վերակայացման հետ գուզնութաց, նախատեսում ենք հանդիպումներ ունենալ տարբեր գոլեճների տնօրէնների հետ՝ քննարկելու համագործակցութեան հնարաւոր եւ երկուստեք շահաւէտ ուղիները:

Նախատեսուած է եւ նման հանդիպում նահանգի կրթական կառույցի բարձրաստիճան անձանց հետ, քննարկելու գոլեճի վկայականների հնարաւոր վերաորակաւորման հարցը:

Հարցազրույցը վարեց՝ Դոկտ. Մինաս Գոճայեան

Դասադուլ

Շարունակում է 13-ին

ունի կրթական նախարարութիւնից:

Ուրախ եւ գոհ էի, որ աշակերտները առանց խանգարելու լսում էին բացատրութիւններս եւ սպասում էին շարունակել առաջարկների ընթերցումը:

-6.-Գործընկեր խոհանոցային սպասարկումները ուտեստեղէնները թանկ են վաճառում:

-Լա՛ւ, եթէ թանկ է, դուք յանձն առէք բուֆետը (խորտկարան), վստահ կը վնասուէք եւ կէս ճամբին կը հրաժարուէք, ամէն ինչ թանկ է մեր օրերում:

-7.-Մեր ազգային բոլոր սօները չեն կատարում:

Ընկալ մտածմունքի մէջ, թէ այս առաջարկը ինչու է ընդգրկուել, քանի որ այդպէս թերացում չի եղել, սթափուելով պատասխանեցի:

-Ուրախ եմ, որ նախանձախնդիր էք մեր սօների նկատմամբ, սակայն այն ինչ որ առաջնորդարանի կողմից շրջաբերական է տրուել, սօնուում եւ դպրոցը արձակուում է:

-8.-Իսկ եթէ մեր դասադուլ արած աշակերտներից որեւէ մէկը դպրոցից դուրս հանուի, բոլորս խստօրէն դուրս կը գանք տեսչութեան դէմ, միակ ճանապարհը, որ վերջ կը տայ դասադուլին մեր ուզածների իրագործումն է: Գրութեան վերջում հրաւիրում է աշակերտութիւնը միակամ եւ վճռակամ լինել:

Այդ մի խումբ աշակերտները

նկատելով իմ բացատրութիւնները ոչ գոհացուցիչ՝ միասնական կանչերով ինձ որակեցին:

-Սազէշքա՛ր, սազէշքա՛ր (համակերպող) բղաւեցին:

Այդ առաջարկներից մէկի հետ ես համաձայն կիսում էի նրանց հետ դասագրքերին կապող, որոնք չէին համապատասխանում աշակերտութեան մակարդակին բարդ եւ ժամանակավրէպ լինելով: Այո՛, պէտք է ուշադիր նրբաթափանց մօտեցում ունենալ դասագիրք պատրաստելիս՝ հոգու եւ մտքի զարգացումներին գուզահեռ նկատի առնել ազգային արժէքների ճիշտ ու շիտակ ուսուցման պահանջը:

Բաժանուում եմ դասադուլ խմբակից եւ վերադառնում եմ տեսչարան:

Դասադուլը դեկտեմբերին էր դրսից:

Դասադուլը դադարեց: Տեսչութիւնը մնաց անփոփոխ: Ուսումնական տարին շարունակուեց:

Յետագայ տարիներում փոփոխութիւններ կատարուեցին՝ ոչ հայ տնօրէններ նշանակուեցին որոշ դպրոցներում, դպրոցը դարձաւ միայն օրիորդաց (աղջկանց), երկուսուսուս արժեքներ արգելուեց երկրի տարածքում, հայոց լեզուի դասաժամերը նուազեցին, բողոքներ եղան համայնքի կողմից, որոշ չափով վերատեսուութեան արժանացաւ Առաջնորդարանի տարած հետեւողական աշխատանքների շնորհիւ: Նոյեմբեր 2006 թ. Կլենտէյլ, Լոս Անճելոս

Կարծիք

Շարունակում է 12-ին

կից ազատել», պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան:

Ու թէ յանկարծ երգս քեզ չհասնի

Հայկական երգարուեստի մէջ խիստ հազուագիւտ է «կարծիք» բառի օգտագործումը, թէեւ հայը սիրած է վառ կարծիքներ յայտնել իր սիրածի մասին: Լոկ երկու երգ իր մէջ կը պարունակէ «կարծիք» բառը: Առաջինը, Մարտին Մկրտչեանի կատարած «Յանկարծ» երգն է, որ սիրոյ տաղ է. «Ես այսօր նոր սէր գտայ յանկարծ / Դու այսօր իմը դարձար յանկարծ թէ ինչպէս չիմացայ / Իմ սրտի հուրը հանգած վառեցիր նորից յան-

կարծ...»: Իսկ Նունէ Եսայեանի «Ու թէ յանկարծ» երգը, որ Արտյոմ Սարգսեանի կատարմամբ նոր կեանք ստացել էր, հեռացած սիրոյ յուզիչ պատմութիւն է, աշխարհին յայտնի... Մինչ, յարգելի ընթերցող, ձեզ առանձին կը ձգեմ այդ երգի խօսքերով, կը մաղթեմ որ կարծիքները ձեզ յուսախաբ չընեն, իսկ մեր ազգը միակարծիք թող ըլլայ իր անընթերու առջեւ:

Սոռանալ չեմ կարող իմ սեր... Ու թէ յանկարծ երգս քեզ չհասնի Չեմ տխրի այդքան կը պահեմ ես գաղտնի թող մնայ իմ հետ սերը իմ յօրինած քեզ համար անյայտ աշխարհին յայտնի:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more... Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

The Armenian Academy at Blair, an IB World School
1201 S. Marengo Ave., Pasadena

- FREE TUITION
- 6th-12th Grades
- Top Sports
- Both dialects and all levels welcomed.

2023-2024 School Year

For Information/Tours Sign up at www.ArmenianAcademy.org or contact **Maro Yacoubian** at 626-275-1330

• Presitgious International Baccalaureate Program

• ANY student from ANY CITY can attend.

ARMENIAN THEATRE COMPANY PRESENTS

THE HOUSE ON THE BORDER

OF AZERBAIJAN

By **Kariné Khodikyan**

TRANSLATED AND DIRECTED BY ARAMAZD STEPANIAN

FEBRUARY 4TH 3PM \$15 8PM \$30 **FEBRUARY 5TH 4PM \$30**

AGBU VTM PERFORMING ARTS CENTER
2495 E. MOUNTAIN STREET PASADENA, CA 91104

TICKETS: www.itsmyseat.com/CAPS
T: 818-484-7187 @ArmenianTheatreCompany

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Նովակ Ջոկովիչը Եւ Ալինա Սաբալենկան Աւստրալիայի Բաց Առաջնութեան Յաղթողներ



Թենիսի «Մեծ սաղաւարտի» տարուայ առաջին մրցաշարքի՝ Աւստրալիայի բաց առաջնութեան տղամարդկանց մենախաղի եզրափակիչին Նովակ Ջոկովիչը մրցեցաւ յոյն Ստեֆանոս Յիցիպասի հետ: Մօտ 3 ժամ տեւած մրցախաղին Նովակ Ջոկովիչը առաւելութեան հասաւ երեք սեթերէն յետոյ՝ 6:3, 7:6, 7:6 հաշուով:

Նովակ Ջոկովիչը նուաճեց «Մեծ սաղաւարտ»-ի իր 22-րդ տիտղոսը: Ան հաւասարեցաւ Ռաֆայէլ Նատալիին՝ տիտղոսներու թիւով:

Կանանց մենախաղի յաղթողը պելաուուս Ալինա Սաբալենկան էր: Կանանց մենախաղի եզրափակիչին իրար դէմ մրցեցան աշխարհի 5-րդ ու կեստ պելաուուս Ալինա Սաբալենկան եւ դազարիս, աշխարհի 25-րդ ու կեստ Ելենա Ռիբակինան:

2,5 ժամ տեւած մրցախաղէն յետոյ Սաբալենկան յաղթեց երեք սեթերէն յետոյ՝ 4:6, 6:3, 6:4 հաշուով: Այս Սաբալենկայի առաջին յաղթանակ է Աւստրալիայի բաց առաջնութեան:

Թենիսի Աւստրալիայի բաց առաջնութիւնը «Մեծ սաղաւարտի» տարուայ 4 գլխաւոր մրցաշարերէն մէկն է: Այն կը կատարուի Աւստրալիայի Մելբուրն քաղաքին մէջ:

Խաչանովը Շնորհակալութիւն Յայտնած Է Հայաստանի Դրօշներով Իրեն Աջակցած Երկրպագուներուն



Հայկական արմատներով ուսն թենիսիստ Կարէն Խաչանովը ամփոփած է Աւստրալիոյ բաց առաջնութեան իր ելուցները ու անդրադարձած է այն երկրպագուներուն, որոնք Հայաստանի դրօշներով աջակցած են իրեն ամբողջ մրցաշարի ընթացքին:

«Ինձ համար կարեւոր է այն, որ Հայաստանի դրօշներով երկրպագուներ կային: Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել անոնց աջակցութեան համար: Ռուս երկրպագուներուն չէին թողած Ռուսաստանի դրօշը բերել, սակայն ես զգացած եմ նաեւ անոնց աջակցութիւնը: Երջանիկ եմ, որ անոնք իրենց սէրը տուին ինձ մինչեւ վերջին պահը», - մրցաշարի մամուլի ծառայութեան հետ զրոյցի ընթացքին ըսած է Խաչանովը:

Կարէն Խաչանովը դուրս մնաց Աւստրալիոյ բաց առաջնութեան եզրափակիչէն: Կիսաեզրափակիչին Խաչանովը մրցեցաւ յոյն թենիսիստ Ստեֆանոս Յիցիպասի հետ: 4 ժամէն աւելի տեւած մրցախաղէն Յիցիպասը յաղթեց 7:6, 6:4, 6:7, 6:3 արդիւնքով:

Մարմնամարզութեան Եւրոպայի Առաջնութիւնը Պիտի Կայանայ Երեւանի Մէջ

Մարմնամարզութեան Եւրոպայի 2027 թուականի առաջնութիւնը տեղի պիտի ունենայ Երեւանի մէջ:



Այս մասին կը յայտնէ Հայաստանի մարմնամարզութեան ֆետերացիան: Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան բարձր հովանիի ներքեւ, Հայաստանի մարմնամարզութեան ֆետերացիայի նախագահ Գագիկ Վանոյանի եւ իր խումբի ջանքերով՝ 2027 թուականին կայանալիք տղամարդկանց եւ կանանց սպորտային մարմնամարզութեան Եւրոպայի առաջնութիւնը կը կայանայ Երեւանի մէջ:

«Ինթեր» Յաղթեց «Քրեմնոնեզլ»-ին. Մխիթարեանը Մասնակցեցաւ Ամբողջ Խաղին

Ի տ ա լ ի ո յ ֆ ու թ պ ո լ ի առաջնութեան 20-րդ հանգրուանի շրջագիծէն ներս «Ինթեր» հիւրընկալած էր «Քրեմնոնեզլ»-ին:



Խ ա դ է ն ընդամէնը 11 վայրկեան ետք «Քրեմնոնեզլ»-ի ֆուլթայուտները յաջողեցան առաջ անցնիլ հաշուի մէջ:

«Ինթեր» յաջողեցաւ ոչ միայն խուսափիլ պարտութենէն, այլ նաեւ յաղթանակի հասաւ: Նախ 21-րդ, ապա երկրորդ կէսի 65-րդ վայրկեանին միլանեան ակումբի կազմէն կոլերու հեղինակ դարձաւ Լաուտարօ Մարտինես: Արժենթինացի դարձաւ դուպլի հեղինակ:

Հենրիխ Մխիթարեանը «Ինթեր» խումբէն մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս հանգրուանէն յետոյ «Ինթեր» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակէն վրայ բարձրացաւ երկրորդ հորիզոնականը: Խումբը ունի 40 կէս: 38 կէս ունի «Միլան»-ը, որ մէկ հանդիպում քիչ կատարած է: Առաջատարը «Նապոլի»-ն է, որ ունի 50 կէս:

«Մանչեսթըր Սիթին» Պայքարէն Դուրս Ձգեց «Արսենալին»

Անգլիոյի գաւաթի խաղարկութեան 1/16 եզրափակիչին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» սեփական դաշտին վրայ մրցեցաւ Լոնտոնի «Արսենալին» հետ:

Կաթալոնացի Խոսեպ Գուարտիոյի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

64-րդ վայրկեանին աչքի ինկաւ հոլանտացի պաշտպան Նաթան Ակէն:

«Մանչեսթըր Սիթին» հասաւ 1/8 եզրափակիչ:

«Մանչեսթըր Եունայթըտը» Հասաւ Գաւաթի 1/8 Եզրափակիչ

«Մանչեսթըր Եունայթըտը» հասաւ Անգլիոյի գաւաթի մրցաշարքի 1/8 եզրափակիչ:

Հոլանտացի էրիկ տեն Հազի գլխաւորած խումբը «Օլդ Թրաֆորտ» մարզադաշտին վրայ ընդունեց «Ռետինկին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

Դաշտի տէրերու կազմէն դուպլի հեղինակ դարձաւ պրագիլցի կիսապաշտպան Կազեմիրոն: «Մանչեսթըր Եունայթըտը» երրորդ կողմ նշանակեց պրագիլցի կիսապաշտպան Ֆրետը, որ նաեւ մէկ կողային փոխանցում կատարած էր Կազեմիրոյին:

ՊՍԺ-ն Յաղթանակը Բաց Թողեց Աւելցուած Ժամանակին

Ֆրանսայի առաջնութեան 20-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ը ընդունեց «Ռեյմսին»: Խաղը աւարտեցաւ 1:1 հաւասար արդիւնքով:

Ֆրանսացի Կրիստոֆ Գալտիէի գլխաւորած խումբէն խաղի հաշիւը բացաւ պրագիլցի յարձակող Նեյմարը 51-րդ վայրկեանին:

59-րդ վայրկեանին հեռացուեցաւ փարիզեան ակումբի իտալացի կիսապաշտպան Մարկօ Վերատին: Թուային առաւելութիւն ունենալով «Ռեյմսը» կարողացաւ աւելացուած 6 վայրկեանին հաւասարութեան կողմ նշանակել անգլիացի յարձակող Ֆոլարին Պալոկունի միջոցաւ:

ՊՍԺ-ն 48 կէսով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէս առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լանսէն»:

Պետրիի Կողմ Յաղթանակ Ապահովեց «Պարսելոնային»

Սպանիոյ առաջնութեան 19-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելոնան» հիւրընկալուեցաւ «Ժիրոնայէն»: Սպանացի Չաւիի գլխաւորած խումբը յաղթեց նուազագոյն արդիւնքով:

61-րդ վայրկեանին կոլի հեղինակ դարձաւ 20-ամեայ սպանացի կիսապաշտպան Պետրին:

«Ռեալը» Ու «Ռեալ Սոսիետատը» Կոլ ՉՆշանակեցին

Սպանիոյ առաջնութեան 19-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» Մատրիտի մէջ մրցեցաւ «Ռեալ Սոսիետատի» հետ:

Դարպասի գրաւում չկատարուեցաւ՝ 0:0: «Ռեալը» 42 կէսով երկրորդն է եւ առաջատար «Պարսելոնայէն» եւ է 5 կէս: «Ռեալ Սոսիետատը» երրորդն է՝ 39 կէս: